2006, ՆՈՅԵՄԲԵՐ Բ, ԹԻՎ 22 (234)

# Հայաստանյայց Եկեղեցի

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

## ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

### Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

*նոյեմբերի 18- ին*

### Կանադայի նորանշանակ դեսպանին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ-ում Կանադայի Համադաշնության նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Ռալֆ Լիսիշինին (նստավայրը՝ Մոսկվա)՝ տիկնոջ հետ:

Նորին Սրբությունը, շնորհավորելով պրն Լիսիշինին՝ նշանակման առիթով, վստահություն հայտնեց, որ դեսպանը որոշապես պիտի նպաստի Հայաստանի եւ Կանադայի միջեւ հարաբերությունների սերտացմանը եւ տարբեր ոլորտներում առկա գործակցության առավել զորացմանը: Վեհափառ Հայրապետն ի դեմս դեսպանի նաեւ իր գնահատանքը հայտնեց Կանադայի իշխանություններին՝ հայ համայնքի նկատմամբ ցուցաբերվող հոգատար վերաբերմունքի, ինչպես նաեւ Հայոց Ցեղասպանության ճանաչման եւ դատապարտման համար:

Հանդիպմանը խոսվեց նաեւ միջեկեղեցական հարաբերություններին եւ միջկրոնական երկխոսություններին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու մասնակցության եւ դերի մասին: Անդրադարձ կատարվեց տարածաշրջանում առկա խնդիրներին:

*նոյեմբերի 29-ին*

### Ֆրանսիայի նորանշանակ դեսպանին



Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Ֆրանսիայի Հանրապետության նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Սերժ Սմեսովին:

Նորին Սրբությունը շնորհավորեց պրն Սմեսովին նշանակման առիթով՝ մաղթելով արդյունավոր եւ հաջող գործունեություն: Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ անդրադարձավ երկու ժողովուրդների եւ երկրների միջեւ առկա բարեկամական հարաբերություններին եւ սերտ համագործակցությանը՝ նշելով, որ Ֆրանսիան առանձնահատուկ տեղ է գրավում հայոց կյանքում: Գարեգին Բ Կաթողիկոսն ի դեմս դեսպանի շնորհակալություն հայտնեց Ֆրանսիայի իշխանություններին եւ ժողովրդին՝ հայ ժողովրդի նկատմամբ ցուցաբերվող սիրալիր վերաբերմունքի եւ գնահատելի աջակցության համար:

Դեսպանն իր հերթին, ուրախություն հայտնելով այցի առնչությամբ, հավաստիացրեց, որ կշարունակի նպաստել երկու երկրների հարաբերությունների առավել խորացմանը:

Հանդիպմանը խոսվեց նաեւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու դերի եւ ներկայիս գործունեության մասին:

## Եպիսկոպոսական ձեռնադրություն Մայր Աթոռ Սբ Էջմիածնում

Նոյեմբերի 19-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցավ եպիսկոպոսական ձեռնադրություն: Հընթացս Սբ Պատարագի Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ եպիսկոպոսական ձեռնադրություն եւ օծում ստացան Մայր Աթոռի պատկան վանքերի տեսուչ Տ. Արարատ ծայրագույն վարդապետ Գալթագճյանը, ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի դեկան, Երեւանի Սբ Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցու վանահայր Տ. Անուշավան վարդապետ Ժամկոչյանը եւ Գեղարքունիքի թեմի առաջնորդական տեղապահ Տ. Մարկոս վարդապետ Հովհաննիսյանը:



Նորին Սրբությունն ընծայացուներին կոչեց եպիսկոպոսության եւ սրբալույս մյուռոնով օծեց ճակատներն ու աջ ձեռքերի բութ մատները, որպեսզի իբրեւ Աստծո պաշտոնյաներ՝ իրենց անձերի ընծայումով շարունակեն բարի ծառայություն բերել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն: Ձեռնադրության արարողության ավարտին նորաօծ եպիսկոպոսներին հանձնվեցին նաեւ եպիսկոպոսական իշխանության խորհրդանիշերը՝ եպիսկոպոսական գավազաններ եւ մատանիներ, ինչպես նաեւ ի նշան Աստծո Խոսքի անձանձիր քարոզչության՝ Սբ Ավետարան:

Օծման ավարտին Ամենայն Հայոց Հայրապետն իր պատգամն ուղղեց նորաօծ եպիսկոպոսներին. *«...Դուք արժանացաք եպիսկոպոսական պատվավոր կոչումին ու աստիճանին, որը պատվից առավել սպասավորություն է եւ սպասավորությունից առավել հանուն Աստծո եւ ժողովրդի բոլորանվեր ինքնընծայում՝ ըստ Քրիստոսի օրինակի, Ով չեկավ պաշտոն առնելու, այլ ծառայելու. «Ոչ եկն պաշտօն առնուլ, այլ պաշտել»: Արդարե՛ւ, խաչը վերցնելու եւ Տիրոջը հետեւելու կոչը հրավեր է գործելու եւ արարելու հանուն հավատավոր ժողովրդի փրկության եւ նրանց հոգեւոր մխիթարության: Այս համոզումով պետք է արժեւորվի բոլոր հոգեւորականների, առավել եւս եպիսկոպոսի գործունեությունը, ով Սուրբ Հոգով կարգված հոգեւոր տեսուչն է հավատացյալների, նախանձախնդիր պահապանը Սբ Եկեղեցու ուղղափառ վարդապետության, մշտարթուն ծառայողը ի խնդիր Եկեղեցու պայծառության, ժողովրդի անաղարտ հավատքի զորացման եւ նրանց առաքինասեր գործերի հաջողության»:* Նորին Սրբությունը մաղթեց, որ նորաօծ եպիսկոպոսներն առավել անձնվիրությամբ ու իմաստությամբ շարունակեն տերունապատվեր խաչը հանձն առած իրենց ծառայությունը բերել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին:

Հավարտ Սբ Պատարագի Մայր Աթոռում տեղի ունեցավ ընդունելություն, որի ընթացքում Հայոց Հայրապետը նորաօծ եպիսկոպոսներին նվիրեց պանակեներ՝ իբրեւ եպիսկոպոսական իշխանության խորհրդանիշ:

Այս օրերի ընթացքում Արարատ, Անուշավան եւ Մարկոս եպիսկոպոսները ուխտի պատարագներ մատուցեցին Մայր տաճարում:

*Շարունակությունը՝ էջ 2*

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ճարտարապետա-շինարարական բաժինը հայտարարում է ներքոհիշյալ շինարարական աշխատանքների իրականացման մրցույթ.**

1. **Եկեղեցի Երեւանի Արաբկիր համայնքում.**
2. **Եկեղեցի Բերդ քաղաքում:**

**Մրցույթի պայմաններին ծանոթանալու եւ մրցութային փաթեթները ձեռք բերելու համար դիմել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ճարտարապետա-շինարարական բաժին՝ ս. թ. դեկտեմբերի 4-ից մինչեւ դեկտեմբերի 25-ը:**

**Մրցութային փաթեթներն անհրաժեշտ է ներկայացնել ս. թ. դեկտեմբերի 28-ին՝ մինչեւ ժամը 13:00:**

## Կարգալույծ է հռչակվել Տ. Պետրոս քահանա Եզեկյանը

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ կարգալույծ է հռչակվել Տ. Պետրոս քահանա Եզեկյանը՝ հոգեւորականին անհարիր վարքի եւ կանոնազանցության համար:

Կարգալույծ հռչակված քահանան այսուհետեւ կդասվի աշխարհականների շարքը եւ կկոչվի ավազանի անունով՝ Արմեն Եզեկյան:

# ԳՈՒԳԱՐԱՑ թեմում

## Ընդօրինակելի նախաձեռնություն

Նոյեմբերի 22-ին կայացավ Վանաձոր համայնքի ավագանու նիստ, ուր միաձայն ընդունվեց Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպս. Չուլջյանի եւ Լոռու մարզպետ Հ. Քոչինյանի առաջարկը՝ մարզի մանկական կրթօջախներն անվանել համաքրիստոնեական եւ հայազգի նշանավոր սրբերի անուններով: Հայաստանի բոլոր մարզերում սա առաջին նախաձեռնությունն է, որը նպատակ է հետապնդում մատաղ սերնդի մեջ սեր ու ակնածանք արթնացնել հոգեւոր եւ ազգային արժեքների հանդեպ:

Ի դեպ, Գուգարաց թեմի Լոռու մարզում, թեմակալ առաջնորդի եւ մարզպետի համատեղ նախաձեռնությամբ, դեռեւս 1998 թ., առաջինը Հանրապետությունում, «Հայոց Եկեղեցու պատմություն» առարկան մուտք գործեց մարզի հանրակրթական դպրոցներ:

Հուսով ենք, որ այս շարունակական համագործակցությունն իր բարեբեր պտուղները կունենա նաեւ ապագայում:

## Հնեվանքի խաչի օծումը



Նոյեմբերի 25-ը երկար կմնա կուրթանցիների եւ հարակից գյուղերի բնակիչների հիշողություններում, քանզի այդ օրը մեծ հանդիսությամբ տեղադրվեց եւ օծվեց Կուրթանի ձորում գտնվող VII-XII դարի հնամենի Հնեվանքի գմբեթի խաչը:

Իրավի պատմական էր այս օրը: Անհիշելի ժամանակներից խոնարհված եւ լքված վանական այս համալիրը պետական բյուջեից հատկացված միջոցներով նոր շունչ է առնում: Վանքի վերակառուցման համալիր աշխատանքները շարունակական են:

Համաձայն Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու եւ մեր հոգեշնորհ վարդապետների կանոնակարգած արարողության՝ ըստ պատշաճի խաչը լվացվեց նախ ջրով եւ գինով, ապա սրբազան առաջնորդի ձեռամբ օծվեց սուրբ մյուռոնով: Եվ, ինչպես իր քարոզում շեշտեց Սեպուհ սրբազանը, «Հնեվանքի այս հիասքանչ եկեղեցու խաչը սրբագործվեց՝ վերածվելով այն հաղթության զենքի եւ ամրության վահանի՝ ի մխիթարություն եւ ի օրհնություն Լոռվա աշխարհի մեր հավատացյալների»: Ապա սրբազան հայրն իր խոսքում ներկաներին, մասնավորապես երիտասարդությանը եւ աշակերտությանը հորդորեց քրիստոնեական արժեքներով կենցաղավարել եւ հավատարիմ մնալ մեր ազգային արժեքներին ու ինքնությանը: Միջոցառմանն իրենց գեղարվեստական համարներով հանդես եկան Կուրթանի հանրակրթական դպրոցի սաները: Ներկա էին Լոռու մարզպետարանի ներկայացուցիչներ, համայնքապետեր, երիտասարդություն, ուսուցիչներ եւ աշակերտներ:

*ԴԻՎԱՆ ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄԻ*

## Եկեղեցի-պետություն-հասարակական կազմակերպություն համագործակցությունը՝ հանուն հասարակության

Նպատակ ունենալով ամրապնդել եկեղեցի-հասարակական կազմակերպություն-պետություն կապը՝ ի շահ հասարակության եւ կարոտյալ խավի՝ Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպս. Չուլջյանի օրհնությամբ եւ «Բոլոր սար» ՀԿ նախաձեռնությամբ, հոկտեմբերի 24-ին առաջնորդարանի սրահում տեղի ունեցավ «Վանաձոր համայնքի սոցիալական հիմնախնդիրները» թեմայով քննարկում:

Վանաձորում ակտիվորեն գործող տասնյակից ավելի հասարակական կազմակերպություններ շատ անգամներ են միասին նստել կլոր սեղանի շուրջ, քննարկել ու վեր հանել համայնքի հիմնախնդիրները եւ փորձել լուծում տալ դրանց: Դեռեւս 2005 թ. ԵՀԽ հայաստանյան միջեկեղեցական բարեգործական Կլոր սեղան հիմնադրամի կողմից Վանաձորի հասարակական կազմակերպությունների համար «Քաղաքացիական հասարակության խմբերի ներուժի եւ կարողությունների զարգացում» ծրագրի շրջանակներում կազմակերպված սեմինար-դասընթացները տվեցին իրենց ցանկալի արդյունքը: Այս տարվա սեպտեմբերից «Բոլոր սար», «Առաջընթաց», «Ընտանիք եւ երեխաներ», «Բնապահպանություն» ՀԿ-ները միասին իրագործում են «Այսօր կերտում ենք ապագան» ծրագիրը՝ ուղղված Վանաձոր համայնքի 14-25 տարեկան պատանիների ու երիտասարդների կարողությունների ու հմտությունների զարգացմանը: Առաջնորդարանում կայացած «Վանաձոր համայնքի սոցիալական հիմնախնդիրները» թեմայով կլոր սեղան-քննարկումը այս ծրագրի մի մասն էր կազմում, որը հնարավորություն է ընձեռում ՀԿ-ների հետագա համագործակցությանը՝ աջակից ունենալով Եկեղեցուն եւ պետական կառույցներին:



Քննարկման ընթացքում թեմակալ առաջնորդը հանդես եկավ գործնական առաջարկություններով, այն է՝ ուշադրությունից ու խնամքից դուրս մնացած մանուկներին ցուցաբերել նյութական եւ բարոյահոգեբանական աջակցություն, կազմակերպել նրանց ամառային հանգիստը թեմապատկան «Ծիծեռնակ» ճամբարում, աջակցել հաշմանդամներին՝ ձեռք բերելու սայլակներ: Գործնական առաջարկությամբ հանդես եկավ նաեւ մարզպետի խորհրդական Էդիկ Հովսեփյանը:

Հանդիպումը խոստումնալից էր տեղեկատվական փոխանակման, հետագա համագործակցության, առաջիկայում նոր հանդիպումների ու քննարկումների կազմակերպման եւ համատեղ ծրագրերի իրականացման առումներով:

## Հանդիպումներ թեմի երիտասարդների հետ

Այսօրվա եւ վաղվա միջեւ հոգեւոր կապի առկայացումը կատարում է երիտասարդությունը: Երիտասարդները եւ ուսանողները բազմիցս են հանդիպումներ, զրույցներ ու բանախոսություններ կազմակերպել թեմակալ առաջնորդի եւ հոգեւոր հայրերի հետ, ոգեշնչվել Սեպուհ սրբազանի հայրենաշունչ քարոզներից եւ քաջալերող խոսքերից: Այս անգամ, արժանին մատուցելով երիտասարդությանը եւ նրա կատարած գործին, նոյեմբերի 16-19-ը Վանաձորում, Ստեփանավանում, Գուգարքի տարածաշրջանում Երիտասարդության եւ ուսանողության միջազգային օրվա առթիվ կազմակերպվեցին հանդիպում-սեմինարներ եւ հանդիսություններ, որոնց մասնակցեցին ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը, Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպս. Չուլջյանը, Լոռու մարզպետ Հ. Քոչինյանը, Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի ռեկտոր Գ. Խաչատրյանը, պետական այլ այրեր:

Երիտասարդությանն իր օրհնությունը բաշխեց սրբազան հայրը՝ կարեւորելով երիտասարդության ունեցած պատասխանատու դերը հայեցի Հայաստանի կերտման ու հոգեւոր հայրենիքի կայացման գործում. «Լինել հայրենապաշտ եւ ունենալ բարոյական բարձր նկարագիր, այսօրվա կերտողը եւ վաղվա տերը լինել մեր ազգային ու հոգեւոր մշակույթի: Ահա պատասխանատու ու պատվաբեր մի առաքելություն, որ պիտի ստանձնի այսօրվա երիտասարդը»:

Սրբազան հայրը երիտասարդներին պատմեց Մայր Եկեղեցու ստանձնած դերի ու առաքելության մասին, ներկայացրեց Գուգարաց թեմի պատմությունը եւ ապա կոչ արեց շարունակել զորավիգ լինել Եկեղեցուն եւ համատեղ ուժերով մեր հայրենակիցներին ետ պահել ազգակործան ու ազգը ջլատող ամեն մի օտարամուտ կրոնական հոսանքից ու աղանդից: Ապա նրանց բաժանեց «Քրիստոնեական» ուղեցույց-գրքույկը:

*Աստղիկ ԱՍՐՅԱՆ*

# Եպիսկոպոսական ձեռնադրություն Մայր Աթոռ Սբ Էջմիածնում

*Սկիզբը՝ էջ 1*

### Տ. Արարատ եպիսկոպոս Գալթագճյան

Տ. Արարատ եպիսկոպոս Գալթագճյանը (ավազանի անունը՝ Հակոբ) ծնվել է 1962 թ. դեկտեմբերի 11-ին Բեյրութում: Նախնական կրթությունը ստացել է ծննդավայրի Սբ Սահակ - Սբ Մեսրոպ վարժարանում: 1977 թ. ընդունվել է Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության դպրեվանքը: 1979-1985 թ. ուսումը շարունակել է Մայր Աթոռ Սբ Էջմիածնի հոգեւոր ճեմարանում: 1985 թ. պաշտպանել է ավարտաճառը՝ «Հայ հին մատենագրության տպագրված տեքստերի մատենագիտություն» թեմայով:1985 թ. որպես սարկավագ՝ ծառայության է կոչվել Դամասկոսի թեմի առաջնորդարանում: 1986 թ. ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ վերակոչվելով Արարատ աբեղա:1988 թ. պաշտպանել է վարդապետական թեզ՝ «Անտիոքի եկեղեցու պատմություն» խորագրով: 1986-1990 թթ. Դամասկոսի թեմում ծառայել է որպես առաջնորդի օգնական: 1990 թ. հրավիրվել է Կանադա եւ ստանձնել Տորոնտոյի Սբ Երրորդություն եկեղեցու հոգեւոր հովվի պարտականությունները: 1993 թ. տեղափոխվել է Մոնրեալ՝ որպես առաջնորդի օգնական, 1994 թ. նշանակվել է Մոնրեալի Հարավային ափի Սբ Նարեկ եկեղեցու հոգեւոր հովիվ: 1995-1996 թթ. Օտտավայում եւ Նյու Յորքում հետեւել է լեզվի դասընթացների, իսկ 1996 թ. ընդունվել է Նյու Յորքի Սբ Ներսես աստվածաբանական ճեմարան եւ Սբ Վլադիմիր ուղղափառ համալսարան: 1996 թ. ստանձնել է Մոնրեալի Սբ Գրիգոր Լուսավորիչ առաջնորդանիստ եկեղեցու հոգեւոր հովվի պաշտոնը՝ միեւնույն ժամանակ իրականացնելով Լավալի Սբ Խաչ եկեղեցու հովվի պարտականությունները եւ սպասավորելով Օտտավայի Սբ Մեսրոպ եկեղեցում՝ որպես այցելու հովիվ: 1999 թ. ստացել է ծայրագույն վարդապետության աստիճան եւ նույն թվականին առաջնորդի կողմից նշանակվել Կանադայի հայոց թեմի առաջնորդական փոխանորդ: 2003 թ. ապրիլի 1-ին նշանակվել է Հայաստանյան ծրագրերի, Հայաստանի ծնողազուրկ երեխաների, Հայ եկեղեցասեր երիտասարդաց կազմակերպության վարիչ-տնօրեն, ինչպես նաեւ Կանադայի թեմի փոքր ծուխերի հոգեւոր տեսուչ, ապա նշանակվել Լավալի Սբ Խաչ եկեղեցու հոգեւոր տեսուչ, իսկ 2004 թ. նույն եկեղեցու հոգեւոր հովիվ՝ պահելով մինչ այդ ունեցած բոլոր պաշտոնները: Մոնրեալում ծառայության ընթացքում կազմակերպել է մի շարք եկեղեցական հրատարակություններ՝ գրքույկներ Եկեղեցու խորհուրդների եւ արարողությունների մասին: Տպագրել է «Նարեկ» կիրակնօրյա թերթիկը, 2000-ից հրատարակել է Եկեղեցու պաշտոնական «Բուրաստան» երկամսյա թերթը: 2006 թ. տեղափոխվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին եւ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից նշանակվել Սբ Էջմիածնի պատկան վանքերի տեսուչ:



### Տ. Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյան

Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանը (ավազանի անունը՝ Անդրանիկ) ծնվել է 1971 թ. նոյեմբեր 12-ին Էջմիածին քաղաքում: Միջնակարգ կրթությունն ստացել է Վահան Ռշտունու անվան թիվ 11 միջնակարգ դպրոցում: 1989-1994 թթ. սովորել է Գեւորգյան հոգեւոր ճեմարանում՝ պաշտպանելով ավարտաճառ՝ «Մովսես Ջուղայեցու «Ժողովածու ի պետս բանասիրաց» թեմայով: 1993 թ. ձեռնադրվել է սարկավագ: 1995 թ. ձեռնադրվել է կուսակրոն քահանա եւ ծառայել Մայր տաճարում՝ որպես լուսարարապետի օգնական:

*Շարունակությունը՝ էջ 3*

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ՆԵՐՍԵՍ Դ ԿԼԱՅԵՑԻ
## (1166-1173)

*Սկիզբը՝ թիվ 19-21*

Ներսեսի մոտ կրոնավորություն էին անում ոչ միայն վերը հիշված Գրիգոր եպիսկոպոսը, որը թերեւս նույնանում է Վասիլ իշխանի որդու հետ, այլեւ Շահանի որդի Գրիգոր եպիսկոպոսը, Շահանի Շահանդուխտ դուստրը եւ Լամբրոնի Օշին իշխանի կրտսեր որդի Սմբատը, որին նա իր հետ էր վերցրել Լամբրոնում գտնված ժամանակ՝ 1165 թ.: Սմբատին նա 1168 թվին՝ տասնհինգամյա հասակում, քահանա ձեռնադրեց՝ նրան տալով իր անունը: Ներսես Լամբրոնացին ուշիմ եւ խելացի երիտասարդ էր, որը մեծապես առաջադիմեց Շնորհալու իմաստուն հովանավորության ներքո:

Չնայած որոշ հույսերի, այնուամենայնիվ, բյուզանդական արքունիքը բոլորովին այն կարծիքին չէր, որ հայերը հեշտությամբ կընդունեն քաղկեդոնականությունը: Անգամ Ներսես Շնորհալին հարցը քննում էր այն տեսանկյունից, որ մի Եկեղեցին մյուսին չպետք է ենթարկվի, եւ բոլոր Եկեղեցիներն էլ պետք է զիջումների գնան: Ըստ երեւույթին, Թեորիանոսը չափից դուրս էր հուսադրել կայսրին եւ պատրիարքին, որոնք համարձակորեն առաջ քաշեցին ինը հռչակավոր կետերը կամ խնդիրները: Ճիշտ է, բյուզանդական արքունիքը երկու տարի կռիվներ էր մղում Վենետիկի դեմ, որը թերեւս կարող էր խանգարիչ պատճառ դիտվել հայ-բյուզանդական հետագա հարաբերությունների զարգացման գործում, սակայն դժվար չէ նաեւ առարկել, որ եթե միությունը Հայոց Եկեղեցու հետ կնքվեր, ապա կայսրը լատինների դեմ պայքարում կունենար հայերի աջակցությունը:

1170-1172 թթ. միջոցին նշանավոր է Ներսես կաթողիկոսի ջանքերով արեւորդիների դարձը: Սրանք հայ աղանդավորներ էին, որոնց կաթողիկոսը համեմատում էր բուլղար բոգոմիլների հետ, որոնք ձեւավորվել էին Բալկաններ գաղթեցված պավլիկյանների գաղափարների ազդեցության ներքո: Թերեւս որպես աղանդ՝ մոտ էին թոնդրակեցիներին կամ ամայեցիների ու շպղթանցիների մի հատվածն էին, որոնք հիշատակվում են Գրիգոր Պահլավունի կաթողիկոսի օրոք: Սակայն այստեղ առավել նշվում է նրանց կողմից արեւի պաշտամունքը, սատանայի պաշտամունքը եւ բարդի ծառի նկատմամբ ունեցած հարգանքը, որով աղերսվում են եզիդիների հետ, չնայած վերջիններս շատ են ազդվել նաեւ մահմեդականությունից: Մ. Օրմանյանն իրավացիորեն նշում է, որ Արեւելքի աղանդավորները մի ամբողջ միություն չէին կազմում եւ պատկանում էին առանձին վարդապետություններ որդեգրած աղանդների: Արեւորդիների մի մասը փափագում է վերադառնալ Հայ Առաքելական Եկեղեցու գիրկը եւ դիմում է Թորոս արքեպիսկոպոսին ու Գազան իշխանին, որոնք դիմում են կաթողիկոսին, թե ինչ ձեւերով այդ անեն: Ներսեսն էլ իր հերթին բացատրում է, որ դարձողները պետք է զղջացողների պես ընդունեն քրիստոնեական սկզբունքը, չմկրտվածներին պետք է մկրտել, իսկ մկրտվածներից պահանջում է խոստովանել եւ ապաշխարել, պահպանել ծեսերը եւ հրաժարվել արեւի, սատանայի եւ բարդու պաշտամունքից: Որպես քրիստոնյա՝ նրանք տարեկան երկիցս կամ երիցս պետք է ապաշխարեին, սովորեին քրիստոնեական կրոնը եւ երիտասարդներից կրոնավորներ պատրաստեին եւ հրաժարվեին արեւորդի անունից:

Ներսեսն իր պաշտոնավարության շրջանում, որ ըստ Վարդանի՝ յոթ տարի տեւեց, ընդամենը յոթ եպիսկոպոս ձեռնադրեց, որոնք նշանավոր ու ընտիր կրոնավորներ էին, վարդապետներ ու փիլիսոփաներ: Պատմիչի խոսքերից պարզ հասկացվում է, որ հայոց հայրեպետն անարժանների չձեռնադրեց եւ կաշառք չվերցրեց: Եպիսկոպոսների կարիքը շատ ավելի մեծ էր հիշյալ շրջանում, սակայն Ներսեսը ձեռնադրում էր առավել արժանավորներին: Մ. Օրմանյանի կարծիքով՝ դրանց մեջ էր թերեւս Կարսի եպիսկոպոս Խաչատուրը, որը փոխարինել էր Աբրահամին: Մյուսը եղել է Սյունյաց Ստեփանոս եպիսկոպոսը, որը 1168-ին հաջորդել է իր հորը եւ նախորդ Գրիգորին, որը ձեռնադրվել էր Գրիգոր Պահլավունու կողմից: Յոթի մեջ պետք է լինեին նաեւ նրա եղբորորդիներ Գրիգոր Տղան եւ Գրիգոր Ապիրատը, եթե իհարկե նրանք չէին ձեռնադրվել Գրիգոր կաթողիկոսի կողմից: Իրողություն, որ չի բացառվում: Հետեւաբար յոթից մյուս հինգը գլխավոր թեմերի առաջնորդներ պետք է լինեին:



Ներսես Շնորհալին Մանվել կայսրին խոստացել էր երկու Եկեղեցիների միության համար հատուկ ժողով գումարել, սակայն «Առ եպիսկոպոսս եւ վարդապետս Հայաստանեայց» ուղղված նամակում նա վստահեցնում է բոլորին, որ միության խնդիրը մեջտեղ չի գա՝ առանց նրանց հետ հարցը ժողովում քննելու եւ բոլորովին չէր շտապում պաշտոնական ընթացք տալ այդ խնդրին: Նրա բռնած դիրքը որեւէ կերպ չի աղերսվում Թեորիանոսի նկարագրած Ներսեսին, որն իբր արտասվաթոր աչքով զղջացող եւ քաղկեդոնականությունն ընդունելու պատրաստակամ հայրապետ է: Ներսեսը նման հայտարարություն ոչ կարող էր անել եւ ոչ էլ արել է, ավելին, խստիվ հանդիմանել է նրանց, ովքեր հրաժարվել են «հայրենատուր աւանդից»՝ կարծելով, թե լավ բան են անում: Հանդիմանության արդյունքներից մեկը Տարսոնի Պողոս քահանան էր, որն ամբաստանվել էր իր ընկեր Սամվել Սամոսատցուց եւ իր քաղկեդոնականությունն ընդունելու իրողության համար չքմեղաբար նամակ էր ուղարկել հայոց կաթողիկոսին: Վերջինս դատապարտեց նրա «հոռոմանալը», ինչը ցույց է տալիս, որ հայոց հայրապետը հայադավան Եկեղեցու ուղղափառության ջերմ ջատագով էր:

Ներսես Շնորհալին վիճաբանություն է ունեցել Քեսունի ասորի եպիսկոպոս Հովհաննեսի հետ, որին վերը հիշեցինք: Նա նրան հիշում է ասորվոց պատրիարք Միքայելին ուղղված նամակում: Ասորվոց պատրիարքի մեռնելուց հետո ասորի եպիսկոպոսները նոր պատրիարքի ընտրության հետ կապված գաղափար էին հղացել մերձենալու հայերի հետ, եւ որպես պատվիրակ՝ երկու եպիսկոպոս էին ուղարկել Ներսեսի մոտ՝ «վասն միաբանելոյ ընդ ազգին մերում (իմա՛ հայերին - Բ. Հ.)»: Ընտրված պատրիարքը Միքայելն էր, իսկ ուղարկված եպիսկոպոսներից առաջինը Հովհաննեսն էր: Երկու Եկեղեցիներին հուզող խնդիրն ապականության հարցն էր, այլ խոսքով՝ հուլիանյանների եւ սեւերյանների տարբերությունը, որին սպառիչ բացատրություն էր տրվել դեռեւս Հովհան Օձնեցու օրերում, սակայն սովորություն էր դարձել հին խնդիրները քրքրել ամեն մի փոքր հարց մեջտեղ քաշելիս: Ոմանք սկսեցին ասորիներին կրկին հավատացնել, թե «Հայք զՅուլիանեայն Աղիկառնացւոյ ունին զխոստովանութիւն», ուստի Շնորհալին բավարարվում է հայտարարելով, թե Կաթողիկե Եկեղեցին նզովում է ոչ միայն հուլիանյանների վարդապետությունը քարոզողներին ու ընդունողներին, այլեւ հայերին հանիրավի զրպարտողներին: Այդ բանը հասկացնելով Հովհաննես եպիսկոպոսին՝ նա մի փոքր նամակ էլ է տալիս՝ Միքայել պատրիարքին հանձնելու՝ Թեորիանոսի Կոստանդնուպոլիս վերադառնալուց հետո: Հայոց հայրապետը անապականության խնդրին անդրադառնում է նաեւ մելիտինցի ասորի Հակոբ վարդապետին գրած նամակում, որտեղ հանգամանորեն մեկնում է ոչ միայն Սուրբ Գրքերի վկայությունները, այլեւ Հայոց Եկեղեցու դավանությունը:

*Շարունակելի*

***Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***
***Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր***

# Եպիսկոպոսական ձեռնադրություն Մայր Աթոռ Սբ Էջմիածնում

*Սկիզբը՝ էջ 2*

1994-1998 թթ., որպես ազատ ունկնդիր, ուսանել է Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում եւ միաժամանակ Գեւորգյան հոգեւոր ճեմարանում դասավանդել եկեղեցական երաժշտություն: 1998-2000 թթ. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ երաժշտական կրթություն է ստացել Գերմանիայի Զաքսեն-Անհալթի Հալլե-Զաալե քաղաքի Ավետարանական երաժշտական բարձրագույն դպրոցում:

2000-2001 թթ. Հալլե-Վիթենբերգի Մարտին Լյութեր համալսարանում ուսանել է գերմաներեն լեզու եւ ստացել լեզվի իմացության սերտիֆիկատ:

2001 թ. Մայր Աթոռ Ս. Էջմիածնում պաշտպանել է վարդապետական թեզ՝ «Կոմիտասը եւ Հայ Եկեղեցին» թեմայով: 2001-2002 թթ. ընդունվել է Հալլե-Վիթենբերգի Մարտին Լյութեր համալսարանի իրավաբանության ֆակուլտետ՝ մասնավորապես մասնագիտանալով պետական-եկեղեցական իրավունքի մեջ: 2002-2004 թթ. Վեսթֆալենի Վիլհելմի համալսարանում ուսանել է Եկեղեցու կանոնական իրավունք: Ուսման ընթացքում ունեցել է երկու պրակտիկա՝ դատական՝ Եկեղեցական դատարանում, եւ վարչական՝ Մյունսթերի եպիսկոպոսարանում:

2003 թ. պաշտպանել է թեկնածուական թեզ՝ «Հայ Եկեղեցու իրավունքի հիմունքները 4-20-րդ դարերում. պատմաաստվածաբանական ուսումնասիրություն» թեմայով՝ 2004 թ. ստանալով կանոնական իրավունքի լիցենզիա ակադեմիական աստիճանի վկայական: 2004 թ. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինությամբ նշանակվել է հոգեւոր տեսուչ Երեւանի Սբ Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցու՝ շարունակելով դասավանդումը Գեւորգյան հոգեւոր ճեմարանում: 2005 թ. նշանակվել է ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի դեկան:

### Տ. Մարկոս եպիսկոպոս Հովհաննիսյան

Ծնվել է 1973 թ. Անիի շրջանի Բարձրաշեն գյուղում: 1990 թ. ավարտել է Էջմիածնի թիվ 5 միջնակարգ դպրոցը: 1990-1996 թթ. սովորել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հոգեւոր ճեմարանում: 1996 թ. ծառայության է նշանակվել «Ալեք եւ Մարի Մանուկյան» գանձատանը:1996 թ. ձեռնադրվել է սարկավագ: 1998-2000 թթ., որպես հոգեւոր սպասավոր, ծառայել է Ազգային բանակում: 2000 թ. ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

2000-2001 թթ. վարել է Մայր Աթոռի պարետի պաշտոնը:

2001-2002 թթ. սպասավորել է Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմում՝ որպես առաջնորդի օգնական, այնուհետեւ նշանակվել է Ռիգայի Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հոգեւոր հովիվ: 2003 թ. ընդունվել է Մոսկվայի Սբ Տիխոնի անվան Աստվածաբանական ինստիտուտի ասպիրանտուրա: 2005 թ. պաշտպանել է վարդապետական թեզ՝ «Վիմագիր արձանագրությունները եկեղեցագիտական տեսանկյունով» թեմայով եւ ստացել վարդապետական աստիճան: 2005 թ. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինությամբ նշանակվել է Գեղարքունյաց թեմի առաջնորդական տեղապահ:

***ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ***

# ՕԾՎԵՑԻՆ ԱԼԹԱՅԻ ԵՐԿՐԱՄԱՍԻ ԲԱՌՆԱՈՒԼ ՔԱՂԱՔԻ Ս. ՀՌԻՓՍԻՄԵ ԵԿԵՂԵՑՈՒ ԽԱՉԵՐԸ





Նոյեմբերի 12-ին Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմում՝ Ալթայի երկրամասի Բառնաուլ քաղաքում, ձեռամբ թեմակալ առաջնորդ Տ. Եզրաս եպս. Ներսիսյանի եւ առընթերակայությամբ Տ. Մաշտոց քհն. Հակոբյանի, օծվեցին Բառնաուլ քաղաքի Ս. Հռիփսիմե նորակառույց եկեղեցու գմբեթների խաչերը: Օրհնվեց եւ օծվեց նաեւ Հայաստանից բերված կարմրատուֆ խաչքարը, որի նվիրատուն է տիար Արամայիս Մարտիրոսյանը: Խաչքարը կանգնեցված է եկեղեցու շրջափակում՝ ի նշանավորումն ռուս եւ հայ ժողովուրդների բազմադարյան եղբայրության:

Հանդիսավոր այս արարողությանն իրենց ներկայությունն էին բերել Ալթայի երկրամասի Ռուս Ուղղափառ Եկեղեցու թեմի առաջնորդ Մաքսիմ եպիսկոպոսը, Բառնաուլի շրջանային դումայի նախագահ Ս. Կրասնովը, քաղաքային իշխանությունների ներկայացուցիչներ, ինչպես նաեւ բազմաթիվ հայորդիք, ովքեր բնակություն են հաստատել Ալթայի երկրամասում, մասնավորապես՝ Բառնաուլ քաղաքում:

Սրբազան արարողության ավարտին գերաշնորհ սրբազան հայրն իր օրհնության ու բարեմաղթանքի խոսքն ուղղեց հավաքված ժողովրդին՝ կոչ անելով, որ հեռավոր այս երկրամասում հաստատված մեր ժողովրդի զավակները հավատարիմ մնան ազգային եւ հոգեւոր այն արժեքներին, որ ժառանգել ենք մեր նախնիներից, որով որպես ազգ եւ ժողովուրդ արդեն 1700 եւ ավելի տարիներ ապրում եւ արարում է մեր ժողովուրդը՝ ապավինած փրկարար Խաչին:

***ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՎ ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ***

# ԳԻՏԵԼԻՔ ԵՎ ԽՈՐՀՈՒՐԴ

*Սկիզբը՝ 2005-ի թիվ 11-12, 15-18, 20-22, 24, 2006-ի թիվ 1-5, 11-19, 21*

## ՈԳՈՒ ՍՈՎ

Մեր օրերում կան մարդիկ, ովքեր աստվածային լույսը չեն ցանկանում տեսնել: Հայ մեծ գրողներից Ավետիք Իսահակյանը կարծես նաեւ հենց մեր օրերի համար է ասում. «Նյութի տաճարում արբած պարեցիք, Մոռացած անմահ, անհունի տենչանք: Ձեր նյութի հանդեպ կգա ոգու սով»: Եվ իրոք, բազում մարդիկ մտահոգված են օրվա ապրուստի կամ նյութական տարբեր բարիքների ձեռքբերմամբ, բայց, այնուամենայնիվ, զգում են, որ ինչ-որ բան այն չէ իրենց կյանքում, ինչ-որ բան պակասում է իրենց, եւ մարդկային բնությանը հարազատ երջանկության ձգտումն ավելի է սրում այս զգացումը: Եվ սա է հիմնական պատճառներից մեկը, որ կան մարդիկ, ովքեր այս պակասը իրենց կյանքում զգալով, սկզբնապես առանց մտածելու մտնում են աղանդների մեջ, ինչպես որ ծարավից մեռնող մարդը ջուր տեսնելիս անմիջապես սկսում է անհագորեն ըմպել՝ առաջին պահին առանց մտածելու, որ այն կարող է անմաքուր ու վնասակար լինել: Քրիստոսի տված՝ ծառը պտուղներով ճանաչելու խրատը չպետք է մոռանանք, եւ ի տարբերություն աղանդների՝ ազգը պառակտող գործունեության, պիտի հիշենք Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու խիստ ազգանպաստ գործերը: Մեր ժողովրդի լավագույն հատկանիշներից մեկը, իր երբեմն անհարկի ինքնամեծարման կողքին, ինքնաքննադատության կարողությունն է: Սրա վկայությունն է ժողովրդական հետեւյալ խոսքը. «Հայը ձի հեծնելով՝ Աստծուն է մոռանում, ձիուց իջնում է, ձիուն է մոռանում»: Եվ ճիշտ չէ նման ձեւով մոռանալ առաքելահաստատ Հայ Եկեղեցու ճշմարիտ ուղին՝ հետեւելով տարբեր աղանդների կամ ինքնակոչ եկեղեցիների:

## ԿԵՆՍԱԿԵՐՊ

Վատ կյանքի ընթացքը, սնափառությունը, սեփական անձի մասին բարձր կարծիքը եւ նման այլ արատներ դժոխք են տանում: Այդ իսկ պատճառով, սիրելի ընթերցող, հետեւիր այս խորհրդին. «Երբ դու ծնվեցիր, ամենքը ուրախ էին քո շուրջը, մինչդեռ դու լալիս էիր: Ջանա այնպես ապրել, որ մահվանդ օրը, երբ ամենքը լաց լինեն քո շուրջը, դու ուրախ լինես՝ զգալով, որ բարձրանում ես առ Աստված հավիտենական կյանքի համար»:

## ՍԵՓԱԿԱՆ ԱՐԺԱՆԻՔՆԵՐ

Մենք աղոթելիս դիմում ենք նաեւ մարտիրոսներին՝ խնդրելով, որ նրանք եւս՝ իբրեւ սրբեր, աղոթեն մեզ համար: Սակայն եթե մենք արժանիքներ չունենք, նույնիսկ մեր հարազատների կամ մերձավորների սրբությունը չի կարող մեզ օգնել: Ս. Ոսկեբերանն ասում է. «Եթե նույնիսկ Պողոսը քո հայրը լիներ, եւ եղբայրներդ մարտիրոսներ լինեին, դարձյալ ոչ մի օգուտ չէիր ունենա, եթե սեփական արժանիքներ չունես»:

## ԺԱՄԱՆԱԿ՝ ՀՈԳԵՎՈՐԻ ՀԱՄԱՐ

Անհնար է, որ որեւէ մեկի բարի աղոթքներն անպատասխան մնան: Եվ բազում ու բազում մարդիկ այսօր համոզվել են, որ իրենց կյանքում չի եղել որեւէ բան, որ Աստծուց խնդրեն եւ չստանան: Սակայն մարդիկ էլ կան, ովքեր ասում են, որ աղոթքով իրենց շատ խնդրանքներ չեն կատարվել: Հովհան Մանդակունին ասում է, որ եթե քո աղոթքն անպատասխան է մնացել, ապա պատճառն այն է, որ ջերմեռանդությամբ չես խնդրել: Բայց աղոթող մարդկանց թվում նաեւ այնպիսիները կան, ովքեր, երկրային գործերով տարված, ուշադրությամբ չեն աղոթում, ոմանք էլ շատ հազվադեպ են եկեղեցի հաճախում՝ պատճառաբանելով, որ ժամանակ չունեն, ժամանակ չունեն նաեւ Աստվածաշունչ կարդալու:

Ոմանք հարցնում են՝ ինչի՞ համար աղոթենք, եթե Աստված ամենագետ է եւ գիտի մեր կարիքները: Սակայն պետք է գիտենալ, որ աղոթելն առաջին հերթին մեզ համար է, որովհետեւ այն սրբացնում է մարդուն, նրանից հեռու է վանում անառակ եւ վատ մտքերը, իսկ երբ մարդն աղոթում է իր թշնամու համար, դրանից փոխվում է ոչ միայն թշնամին, այլեւ մարդը լցվում է մեծ բարությամբ, եւ իրենից հեռանում են նաեւ թշնամական մտքերն ու զգացմունքները: Աղոթքով է, որ մենք զրուցում ենք Աստծո հետ, որպես մեր ամենամոտ հարազատի, եւ դրանով ամրանում եւ ջերմանում է նաեւ մեր սերն Աստծո հանդեպ: Իսկ ինչ վերաբերում է մեր առօրյա հոգսերի մեջ հոգեւորի համար ժամանակ չունենալուն, ապա դրա մասին գերմանացի մի մեծ մտածող ասել է. «Մարդ միշտ էլ բավականաչափ ժամանակ ունի, եթե միայն այն հարմար կերպով գործածել իմանա»: Իսկ մեծ փիլիսոփա Սենեկան ասել է. «Մենք դառնապես գանգատվում ենք, թե մեր ժամանակը կարճ է: Միշտ դժգոհ ենք, թե մեր օրերը սակավաթիվ են, բայց գործում ենք այնպես, իբր թե դրանք վերջ չունեն»: Եվ եթե մենք անդրադառնանք, թե որքան ժամանակ ենք իզուր վատնում անհարկի խոսակցությունների, հեռուստաֆիլմերի ու տարբեր հաճույքների համար, ապա կզգանք, որ իրոք մեծ ամոթ է մեզ այս ամենի մեջ Աստծո համար ժամանակ չգտնելը: Սուրբ Գրիգոր Տաթեւացին ասում է. «Ոչինչ ավելի պատվական չէ, քան ժամանակը. դրա համար էլ պետք է այս կյանքի ժամանակը ի բարին օգտագործել, որովհետեւ այս ժամանակը ոչ ոք չի կարող վերստին ստանալ»:



## ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ԿՈՒՍՈՒԹՅՈՒՆ

Երուսաղեմի առաջին եպիսկոպոսը եղել է Հակոբոս Տյառնեղբայրը: Հակոբոսը Տիրոջ եղբայրն է, բայց ոչ Մարիամի որդին: Ըստ ուղղափառ վարդապետության՝ սուրբ Մարիամը հավիտենական կույս է եւ բացի Քրիստոսից՝ այլ զավակներ չի ունեցել: Այս վարդապետությանը հակառակվողներից են նաեւ բողոքականները՝ ավետարանականները, որոնք իրենց հակառակումով մեկ անգամ եւս ցույց են տալիս, որ սուտ են նրանց պնդումները, թե Առաքելական Եկեղեցու հետ մեկ են: Հակառակվողները հիմնականում իբրեւ փաստարկ բերում են Մատթեոսի Ավետարանի առաջին գլխի վկայությունը, թե Հովսեփը Մարիամի հետ չհարաբերվեց, մինչեւ Մարիամը ծնեց իր անդրանիկ որդուն եւ նրա անունը դրեց Հիսուս: Սակայն այստեղ «մինչեւ» բառը չի նշանակում, թե Քրիստոսի ծննդից հետո Հովսեփը Մարիամից որդիներ է ունեցել: «Մինչեւ» բառը ունի երկու իմաստ. նախ՝ մի բան չի եղել, եւ հետո եղել է հակառակը, երկրորդ՝ որեւէ բան չի եղել եւ հետո էլ չէր կարող պատահել: Մենք բոլորս էլ մեր խոսակցական լեզվում, թեեւ երբեմն անգիտակից կերպով, «մինչեւ» բառը գործածում ենք այս երկու իմաստներով: Բայց որպեսզի օրինակներն ավելի հատկանշական ու տպավորիչ լինեն, դրանք բերենք Սուրբ Գրքից: Հին Կտակարանում ասվում է, թե Սավուղի դուստր Մեղքողը մինչեւ իր մահը զավակներ չունեցավ: Սա չի նշանակում, թե մահից հետո զավակներ է ունեցել: Սաղմոսում ասվում է. «Տերն իմ Տիրոջն ասաց՝ նստի՛ր իմ աջ կողմում, մինչեւ որ քո թշնամիներին դնեմ քո ոտքերի տակ.....», բայց այստեղ «մինչեւ»-ը չի ենթադրում, թե թշնամիներին հնազանդեցնելուց հետո շարժվելու, կանգնելու կամ գնալու հորդորը կա: Պետրոս առաքյալը Քրիստոսին ասաց, որ ինքը մինչեւ մահ հետեւելու է Տիրոջը: Անշուշտ Պետրոս առաքյալը նկատի չուներ, որ երբ մեռնի կամ հարություն առնի, այլեւս չի ցանկանալու Քրիստոսի ետեւից գնալ: Եվ ամենազորավոր օրինակը՝ Քրիստոսն ասաց. «Եվ ահա ես ձեզ հետ եմ բոլոր օրերում՝ մինչեւ աշխարհի վախճանը». սա չի նշանակում, թե Քրիստոսը նկատի ուներ, թե աշխարհի կործանումից ու վախճանից հետո այլեւս մեզ հետ չի լինելու: Երբ Քրիստոսն Իր գավառը գնաց եւ ուսուցանում էր ժողովարանում, փարիսեցիները, դեմ լինելով նրա ուսուցմանը, ասացին. «Սա հյուսնի որդին չէ՞. սրա մայրը չէ՞, որ Մարիամ է կոչվում. եւ սրա եղբայրները...»: Եթե ուշադիր լինենք, կտեսնենք, որ այստեղ էլ միայն Քրիստոսն է կոչվում Մարիամի որդի, իսկ մյուսները կոչվում են Քրիստոսի եղբայրներ: Աստվածածնի հավիտենական կուսությանը մենք հավատում ենք նաեւ ըստ ավանդության, որը փոխանցվել է առաքյալների կողմից: Պողոս առաքյալն ինքն է պատվիրում, որ ամուր պահենք ոչ միայն գրվածը, այլեւ բանավոր կերպով փոխանցված ավանդությունը:

*Շարունակելի*

***Տ. Ադամ քհն. ՄԱԿԱՐՅԱՆ***

---

# ԽԱՉՔԱՐ

Խաչքարը, որպես արվեստի տեսակ, իր ուրույն ու անկրկնալի տեղն ունի համաշխարհային քաղաքակրթության մեջ: Այն արեւմտյան ճակատին տերունի նշանի՝ սուրբ խաչի պատկերով, գեղեցկահյուս զարդանախշերի ու զարդաքանդակների յուրօրինակ հորինվածքով ուղղաձիգ կանգնեցված սալաքար է, որն իբրեւ երեւույթ՝ պատկանում է միմիայն Հայաստան աշխարհին եւ հայ մարդուն: Խորանաձեւ պատվանդանի վրա բարձրացող քարե սալի ուղղանկյուն կտրվածքի կենտրոնում գտնվող խաչի վրա հաճախ փորագրվում են Հիսուս Քրիստոսի, Աստվածամոր պատկերները՝ բոլորեքյան ընդելուզված նրբահյուս քանդակներով ու ժանեկազարդ նախշերով. դրանցից ոչ մեկը չի կրկնվում մեկ այլ խաչքարում:

Բիբլիական հինավուրց այս երկրում է, որ Քրիստոսի պատվական սուրբ խաչը՝ որպես փրկության նշան, Ս. Եկեղեցու՝ մշտավառ մոմերի ծխից գորշացած ու անուշաբույր խնկի հոտից արբեցած սրահներից եւ լուսախորան կամարներից փոխադրվեց նաեւ քարակոթողի վրա՝ իր վեհությամբ, հարդարանքի նրբին մանրամասներով հիացնելով դիտողին: Խաչքարի հակառակ երեսը ողորկ է կամ պատած արձանագրությամբ, որը սովորաբար հաղորդում է քարագործ վարպետի անունը եւ ստեղծման թվականը:



Հայոց «փոքր ածուի» համար խաչքարը միշտ էլ սրբություն է եղել, որի նկատմամբ առանձնակի վերաբերմունք է տածվել: Իբրեւ հոգու փրկության խորհրդանիշ՝ խաչքարերը վաղնջական ժամանակներից սկսած դրվել են վանք տանող ճանապարհներին, ճամփաբաժաններին, եկեղեցիների մուտքերի մոտ, գավիթներում, որմնախորշերում, բլուրների վրա եւ գերեզմանատներում՝ իբրեւ մահարձան:

Խաչքարն իր կատարելության բարձունքին հասավ ԺԲ-ԺԴ դդ: Խաչքար-հուշարձանները հավերժացրել են պատմամշակութային կարեւոր անցքերն ու իրադարձությունները: Գեղարդավանքում, Գոշավանքում, Սանահինում, Հաղպատում, Հաղարծինում, Նորավանքում եւ այլուր հանդիպում ենք շատ խաչքարերի, որոնք հմայում են իրենց պերճությամբ ու նրբագեղությամբ: Ուշագրավ են հատկապես Հին Ջուղայի գերեզմանատան հազարավոր խաչքարերը, որոնք, հիրավի, կրում են ժամանակի շունչն ու ոգին:

Ի դեպ, բոլոր խաչքարերն օծված ու օրհնված պետք է լինեն հոգեւորականի կողմից, որպեսզի օժտվեն հիվանդություններ բուժելու աստվածային շնորհով, ու նոր միայն կարելի է դրանք համբուրել...

Թող Քրիստոս Աստծո ամենահաղթ Խաչն ու տիրախնամ Աջը մեզ բոլորիս լինեն պահապան. ամեն:

***Արմեն դպիր ԽԱՉԱՏՐՅԱՆ***
***Գեւորգյան հոգեւոր ճեմարանի***
***Ե լսարանի սան***

# ՊԱՐՈՆՅԱՆԻ ԵՎ ՕՏՅԱՆԻ ԱԶԳԱԿԻՑ ԼԵՌ ԿԱՄՍԱՐԸ



Սկիզբը՝ թիվ 17-21

**4.**

Քաղաքական, սոցիալական եւ կենցաղային երգիծանքի ասպարեզներում Լեռ Կամսարն, այո՛, իր մեծ նախորդների արժանավոր հետեւորդն էր: Հաճախ կարելի է հանդիպել դրանցից երկուսի կամ նույնիսկ երեքի համադրմանը միեւնույն ստեղծագործության մեջ: Ճիշտ ու ճիշտ Օտյանի նման՝ գրում էր Վանում լույս տեսնող մամուլում՝ ծաղրելով թուրք կառավարությանը, գրում էր դաշնակցական թերթերում՝ ծաղրելով դաշնակ գործիչների սխալներն ու թերությունները: Հանրահայտ է, օրինակ, Կարինի անկման առթիվ գրված սուր քաղաքական ֆելիետոնը, ցարական, ապա եւ բոլշեւիկյան Ռուսաստանի, ինչպես նաեւ եվրոպական տերությունների երկդիմի քաղաքականությունը ծաղրող ֆելիետոնները, որոնց մի մասն է միայն տպագրվել «Ազգային այբբենարան» գրքում: Բայց ահա խորհրդային ժամանակներում, երբ հայ ազգային քաղաքական կուսակցությունների առաջնորդները, ազգային գրեթե բոլոր գործիչները դատապարտվում էին կոմունիստների կողմից, եւ մանավանդ նրանց առաջնորդներ Լենինի, Ստալինի, Բերիայի, ապա եւ Մալենկովի, Բուլգանինի, Խրուշչովի անունները հնարավոր բոլոր եղանակներով փառաբանվում էին՝ ամենուր երկյուղով ու ծափահարությամբ ընդունվելով, երբ կոմունիզմի «ամենահաղթ» հորջորջվող գաղափարախոսությունն անքննադատելի վարդապետություն էր համարվում, հայ իրականության մեջ կար մի հպարտ բացառություն, մի հանդուգն ու խիզախ գրող, որը երբեք գլուխ չծռեց ու անդերսենյան հեքիաթի մանկան պես ոչ միայն հայտարարում էր, թե թագավորը մերկ է, այլեւ ծիծաղով մատնացույց էր անում այդ մերկության բոլոր տգեղություններն ու անհարմարությունները, բոլոր տեսանելի եւ անտեսանելի արատները: Նրան չկարողացան լռեցնել լենինյան-ստալինյան ռեժիմի բոլոր սարսափները՝ ո՛չ գործազուրկ մնալն ու ընտանիքով սովամահության դատապարտված լինելը, ո՛չ երեւանյան բանտն ու սիբիրյան տաժանակրությունը, ո՛չ էլ աքսորի ու ծայնազրկության դատապարտվելը: Եվ նրա անունը Լեռ Կամսար էր:

1915-20 թթ. նա ականատես եղավ մեր ժողովրդի անլուր ողբերգությանը, նաեւ եղեռնագործ թուրք բռնազավթիչների դեմ մեր ժողովրդի մղած պայքարի հերոսական դրվագներին, որոնց անմիջական մասնակիցն էր ինքը:

Խորհրդային ժամանակներում, հակառակ բոլոր ճնշումներին ու հալածանքներին, նա ոչ մի զիջում չարեց վարչահրամայական պետությանը, չնահանջեց իր դիրքերից ու չդավաճանեց իր պատմական առաքելությանը: Առիթ ունեցանք վերը տեսնելու նրա սուր երգիծանքից ու մերկացումներից որոշ դրվագներ: Պետք է ասել, սակայն, որ նրա ամենատես աչքից չէր վրիպում իրականության որեւէ բնագավառի թերություն՝ սկսած պետությունների ներքին եւ արտաքին քաղաքականությունից մինչեւ որեւէ պետական նշանավոր գործչի բնավորության այս կամ այն արատը:

Ընթերցող հասարակությունն ու գրականագիտությունն առայսօր հիացած են մեծ տերությունների երկդիմի, ոչ հայանպաստ քաղաքականության պարոնյանական ու օտյանական քննադատությամբ: Պետք է ասել, սակայն, որ Լեռ Կամսարն այդ մարզում բնավ հետ չի մնում իր ուսուցիչներից եւ զարմանալի համարձակությամբ քննադատում է ԱՄՆ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, ցարական, ապա բոլշեւիկյան Ռուսաստանների, Թուրքիայի, Վրաստանի ու Ադրբեջանի հակահայ խարդավանքներն ու հարաբերությունները, որոնց հետեւանքով բզկտվում եւ իր անկուշտ հարեւաններին էր մաս-մաս նվիրաբերվում նրանց շահերի ու հարաբերությունների կիզակետում հայտնված Հայաստանը:

Առանձնակի սրված էր Լեռ Կամսարի քաղաքական տեսողությունը՝ գրեթե Պարոնյանի եւ Օտյանի չափ: Հենց նա էր, որ կարողանում էր անկաշկանդ խոսել հայրենազուրկ ու տառապյալ հայության անունից, անկարելի ժամանակներում խիզախորեն պաշտպանել նրա ոտնահարված իրավունքները:

Անկողմնակալ էր ժողովրդանվեր մեծ երգիծաբանը եւ չէր խնայում նաեւ իր յուրային հայ գործիչներին՝ ազգային շահերի եւ իրավունքների պաշտպանության հարցում եւ մանավանդ հայ-թուրքական, հայ-վրացական, հայ-ադրբեջանական հարաբերություններում թույլ տված անուղղելի կոպիտ սխալների համար: Ինչքան էլ խառն ու դաժան էին հանգամանքները, անհավասար էին ուժերը, եւ մեծ տերությունները խոսքով մեզ հետ էին, բայց գործնականում պաշտպանում էին թուրքերին, մենք՝ հայերս, արդյո՞ք արել ենք ամեն ինչ՝ մեր բռնազավթվող հայրենիքը պաշտպանելու համար:

Հենց այստեղ էր պետք Լեռ Կամսարի զգաստությունն ու ողջամտությունը, իսկ նրա ֆելիետոնները մի-մի սթափեցնող ապտակ էին մեր ազգային գործիչներին թե՛ այն ժամանակ եւ թե՛ այսօր, որովհետեւ պատմությունն այնուամենայնիվ կրկնվում է, իսկ մենք անցյալից քիչ ենք դասեր քաղում ներկայի ու գալիքի համար: Նա սեփական փորձով խորապես համոզվել էր, որ զենք վերցնելով եւ կազմակերպված ազատամարտով թշնամուն վռնդելով է հնարավոր հայրենիքի փրկությունն ու ժողովրդի հավերժությունը.

«Կռիվը կծավալեր տակավ. հայերը քաջաբար կկրակեին. իսկ ազգ մը որ գիտե այդքան կրակել՝ չի մեռնիր: Թուրքերը նկատելով, որ իրենց դիրքը չի օգներ, մյուս կողմե հայերը աննկուն են, հանկարծ զենքերնին վար դրին ու հաշտություն խնդրեցին» (**Լեռ Կամսար,** Ազգային այբբենարան, էջ 16):

Սա էր հայրենապաշտպանության ճշմարիտ ճանապարհը: Բայց ինչպե՞ս ենք կորցրել պատմական Հայաստանի երեք հազար քաղաքներն ու գյուղերը.

«Տաճիկը տեսավ, որ Կովկասը իր հետ քրիստոնեաբար կվարվի - մեկ քաղաքը չտված հաջորդը կպարպե, սկսավ բոլոր քաղաքները գրավել: Այսպես կարճ ժամանակի մեջ առանց դժվարության գրավեց Վան, Խնուս, Ալաշկերտ, Կարաքիլիսե, Երզընկա, Մամախաթուն, Կարին, Քյոփրիքոյը Հայաստանեն ու բազում ավաններ Վրաստանեն: Այս բավական չէր: Տաճիկը, այս վարմունքից քաջալերված, երեսն այնքան պնդացուց, որ չբավականանալով քաղաքավարի իրեն հրամցուցած քաղաքներով, սկսեց Կովկասի բոլոր հավնած քաղաքները ուզել» (նույն տեղում, էջ 81):

Եվ սա այն պատճառով, որ ճիշտ չեն օգտագործվել ինքնապաշտպանության բոլոր հնարավորությունները: Սա դժվար չէ հասկանալ՝ կարդալով Լեռ Կամսարի 1910-ական ստեղծագործությունները եւ մանավանդ «Հայ-թուրքական ընդհարում», «Պառլամենտ», «Պատմություն 1918 թվի կովկասյան անցքերու» ֆելիետոնների շարքը: Իսկ Կարինի ու Երզնկայի անկման լեռկամսարյան մեկնաբանությունն ուղղակի ցնցող է.. *«Կարնո մեջ կար 600 թնդանոթ, անսպառ ռումբ եւ տաճիկի ունեցածեն ավելի զորք, ուզենար նե ջարդուփշուր կըներ զայն, սակայն Հայաստանին նպատակը չէր կազմեր մարմնական պատիժներով խելքի բերել հակառակորդն, այլ կրթիչ միջոցներով, նուրբ ձեւերով հասկացնել իր միտքը:* Այս պատճառով հրաման տվավ բերդապահ թնդանոթային գնդին՝ *տաճիկի երեւալուն բնավ չկրակել, այլ դատարկ թնդանոթներու բերանները շեշտակի հառել թշնամու աչքին մեջ, որ ամչնա ու քաշվի»* (նույն տեղում, էջ 79, ընդգծ. մերն են - Ս. Մ.):

Ի՞նչ արդարացումով չի կռվել հայոց զորքը մեր հայրենիքի ու ժողովրդի համար ամենաճակատագրական պահին եւ առանց դիմադրության ինչպե՞ս է հանձնել ռազմավարական կարեւորագույն նշանակություն ունեցող պաշտպանական հենակետերը: Որոշ տեղերում թշնամուն գերազանցող զորք, ինչպես հայտնի է, ունեցել ենք, ռազմական տեխնիկա ու զինամթերք՝ նույնպես, բայց անհասկանալի է մնում պաշտպանական մարմինների, կոմիտեների ու զորահրամանատարների վարքագիծը:

*Շարունակությունը՝ էջ 8*

# Հոգեւոր հովվի խոսքի նշանակությունը հավատացյալի կյանքում

*Սկիզբը՝ թիվ 21*

Հովհաննեսի Ժ գլխի 11-12 համարներում կարդում ենք. «Ես եմ լավ հովիվը. լավ հովիվն իր կյանքն է տալիս ոչխարների համար: Իսկ վարձկանը, որ հովիվ չէ, եւ ոչխարներն էլ իրենը չեն, երբ տեսնում է, որ գայլը գալիս է, թողնում է ոչխարներին եւ փախչում է»:

Այս երկու նախադասություններում ամփոփված է հովվական աստվածաբանության հիմնական կորիզը: Կարեւորելով վերոնշյալը՝ Գարեգին Ա Վեհափառն իր «Հովուական աստուածաբանութիւն» աշխատության մեջ գրում է. «Իր (հովվի) խոսքը, վարքը եւ գործը այն հայելին են, ուր Քրիստոսի պատկերն է արտացոլվում»:

Համաձայն Վեհափառի՝ հոգեւոր հովվի կոչումը միտված է այն բանին, որ խոսքի միջոցով հռչակվի, տարածվի, իմանալի եւ ընդունելի դարձվի քրիստոնեության ճշմարտությունը: Իսկ հովվի խոսքն էլ ազդեցություն կունենա միայն այն դեպքում, երբ բխի սրտից եւ հավատացյալների հանդեպ հոգատար լինելու նախանձախնդրությունից:

Անհրաժեշտ է նաեւ, որ խոսողի ու լսողի միջեւ լինի սիրո, հաղորդակցության, հարազատության եւ բարեկամության զգացում:

Այն խոսքը, որ բխում է աստվածային իմաստությունից եւ անցնում խոսողի սրտի միջով, մարդու վրա ազդող ամենազորավոր ուժն է: Այն կարող է լեռներ շարժել, ժողովուրդներ ոտքի հանել:

Եվ վերջապես՝ արտաբերած



խոսքերդ այնպես պետք է լինեն, որ քեզ վերադառնան՝ ուրիշին պատճառած երջանկության ուրախությամբ:

Ըստ հայր Իսիդորոս Պելուսիոտի՝ կյանք չունեցող խոսքը, ինչքան էլ որ լինի ուժեղ եւ հիանալի շարադրված, կարող է ծառայել միայն որպես լսողներին վանելու միջոց: Իսկ անդրադառնալով խոսքի բուժիչ հատկությանը՝ հայր Բենիամինը նշում է, որ օրինակով ու խոսքով, Տիրոջ օգնությամբ, հովիվը կարող է բուժել հավատացյալներին:

Խոսքի ուժին չհավատացողը ճիշտ կանի, եթե փախչի հովվական գործից, ինչպես հրդեհից:

Հետաքրքրական է նաեւ Մելքիսեդեկ եպս. Մուրադյանի՝ հոգեկան հիվանդների հետ աշխատելու հետեւյալ դիտողությունը. «Պետք է խոսել առանց վիճելու, որտեղ վեճն անօգուտ է: Պետք է նաեւ խոսեցնել մտավոր հիվանդին եւ այս ճանապարհով թափանցել նրա սրտի մեջ: Հովիվը պարտավոր է ուսումնասիրել այն գրավոր եւ հնտալից երկերը, որոնք խոսում են մտավոր հիվանդների մասին»:

Մարդիկ տարբեր են իրենց մտածելակերպով, աշխարհայացքով, արժեքների գիտակցումով, հավատքի աստիճանով, իրենց հուզող խնդիրներով, սպասումներով եւ այլն: Հենց այս պատճառով է, որ քահանայի խոսքը ոչ միայն ընդհանուրին պետք է ուղղված լինի, այլեւ յուրաքանչյուր անհատի:

Ըստ Մելքիսեդեկ սրբազանի՝ հոգեւոր հովվի խոսքն ուժեղ ու ներգործուն լինելու համար պետք է զգուշանալ հետեւյալ թերություններից.

1. Շատախոսությունից.
2. Կատակաբանությունից.
3. Անհամեստորեն ու երկար վիճաբանելուց.
4. Անհարկի բարձրաձայն խոսելուց.
5. Բամբասանքից ու դատարկաբանությունից.
6. Կեղծ խոսքից.
7. Հովիվը պետքը իր մեջ կրի Քրիստոսի խոսքը.
8. Քահանայի խոսքը պետք է համեմված լինի աղով, այսինքն՝ լինի իմաստալից, որպեսզի շնորհ փոխանցի լսողներին:

Քրիստոնեությունն ինքնին խոսք է: Ավետարաններն էլ են խոսք: Եկեղեցին նույնպես հանդես է գալիս որպես խոսք, միասին խոսված ճշմարտություն: Եվ վերջապես՝ խոսք է հենց Ինքը՝ Բանն Աստծո:

Հետաքրքրական է, որ ճարտասանությանն անդրադառնալով՝ սրբազանն այն համարում է «զորություն եւ առաքինություն»:

Եթե քարոզչի խոսքն իրոք ճշմարիտ է, ապա այն չի կարող առանց ունկնդիրների վրա ներգործելու, հենց այնպես վերադառնալ Աստծուն. քանի որ ճշմարիտ խոսքի ներշնչողը Տերն է:

Եվ վերջապես, քարոզության ճշմարիտ զորությունն այն է, որ խոսողն ունենա սուրբ միտք եւ մաքուր խիղճ:

«Խոսքաբուժությունն ավանդական բժշկության եղանակ է եւ բժշկության ճյուղ: Այն գործնական կիրառություն է գտել անհիշելի ժամանակներից, ունեցել է դրսեւորման ընդարձակ դաշտ եւ այսօր իսկ շարունակում է զարգանալ»... «Մեր լեզվի մեջ պահպանված բազմաթիվ արտահայտություններ արտացոլում են վերաբերմունքի դրական ձեւեր, որոնք քաջալերող, ապաքինող իմաստ եւ ուղղվածություն ունեն. «Ցավդ տանեմ», «Ինչ որ քեզ պատահելու է՝ թող ինձ լինի», «Հոգիս...», «Կյանքս...» (Աշոտ Պետրոսյան, Նարեկը բժշկարան):

Նարեկացին գերազանց է իմացել խոսքի ներգործական ուժն ու եղանակները: Նա այդ մասին ուղղակի ակնարկում է ԻԹ եւ ԻԷ բաներում.

*Եվ արդ, նրանց հետ, որոնք ողբագին եղանակների համաձայն խոսքեր են շարահարում, հորինում հարմար,*
*Ամեն մի տողի վերջում միեւնույն գիրը դնելով,*
*Որով արտասուք հոսեցնելու չափ մորմոքեցնող*
*Առավել սաստիկ ու սուր են ճմլում սրտի ցավերը,-*
*Ուստի ես իմրս գլխին անցած այժմ այդպիսիների,*
*Որոնք լալագին բանաստեղծություն են եղանակում,*
*Նրանց ողբաձայն հեծեծանքներով վշտակիր հոգիս եմ պարզում ահա՛... (Բան ԻԹ, 1-10):*

***Կարեն դպիր ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ***
***ԳՀՃ Ե լսարանի սան***

# ԿՅԱՆՔ՝ ԶԱՐԴԱՐՎԱԾ ՀՈԳԵՇՆՈՐՀ ԳՈՐԾԵՐՈՎ



Իր կյանքի 95-ամյակը բոլորած արժ. Տ. Վարդան ավ. քհն. Տյուլկերյանը Հայ Առաքելական Սբ Եկեղեցու երկարամյա ու քաջարի զինվորներից է: Ծնվել է 1911 թ. մայիսի 15-ին Դարդանելում: Նույն օրը վախճանվել է հայրը: Հազիվ 5 տարեկան մանչուկ՝ եղել է ականատեսն Իզմիրի հայաջինջ սպանդի, մանկությունն անցկացրել Հունաստանում՝ Աթենքում, պատանեկությունը՝ Ալեքսանդրիայում, ապա՝ կրկին Հունաստան: Աստծո ողորմությամբ նա իր մեջ ուժ է գտել ապրելու, ընտանիք ստեղծելու, ուսումնառությամբ կատարելագործվելու՝ ուսուցիչներ ունենալով Նիկոլ Աղբալյանին ու Լեւոն Շանթին: Մեկնել է Սուդան, ուր վարել է տնօրենի եւ դպրապետի պաշտոններ ազգային վարժարանում եւ տեղի հայկական եկեղեցում: Հետագայում հանգրվանել է ԱՄՆ-ում եւ 1957-ին Ֆրեզնոյում ձեռնադրվելով քահանա՝ իր ողջ գիտակցական կյանքը նվիրել Հայ Առաքելական Եկեղեցու սպասավորությանը՝ Լոս Անջելոսում: Որպես «ներհուն ու արդյունաշատ մտավորական» (Լ. Խաչերյան)՝ աշխատակցել է «Արեւ», «Հուսաբեր», «Նոր օր», «Պայքար», «Նաիրի», «Մարմարա», «Ժամանակ», «Նոր կյանք», «Հայ կյանք», «Գեղարդ», «Հայաստանի Հանրապետություն», «Հայրենիքի ձայն», «Արմիներն Օպզերվըր», «Էջմիածին» եւ «Սիոն» օրաթերթերին ու պարբերականներին:

Չնայած զառամյալ տարիքին՝ նա այսօր էլ նույն նվիրումով մասնակցում է պատարագներին, սիրում է երգել, մանավանդ՝ շարականները: Նա իր կյանքը մշտապես զարդարել է նաեւ ողորմության հոգեշնորհ գործերով:

Հարուստ ու բեղմնավոր է Տ. Վարդան քհն. Տյուլկերյանի գրիչը: Լինելով բազմակողմանի զարգացած մտավորական՝ նա իր գրական-հրապարակախոսական գործերում խիստ դիպուկ վերլուծում է մերօրյա կյանքի զանազան խնդիրներն ու տալիս բարոյախրատական կուռ պատասխաններ՝ անհերքելիորեն շեշտելով հայոց հոգեւոր եւ գրական անդաստանը: Նրա գրիչը իրատես ու խոհական լինելով հանդերձ՝ աչքի է ընկնում նաեւ նուրբ հումորով ու լավատեսությամբ, լավատեսություն, ուր մեծապես իշխում է անսահման սերն Աստծո ու մարդու հանդեպ: Այս բարոյալքված աշխարհում, չնայած իր տարիքին, նա շարունակում է լինել Քրիստոսի Լույսի ջահակիրն ու Նրա հոգեւոր սերմնացանը՝ հայոց հոտի մեջ զորացնելով հավատքն առ Քրիստոս եւ սերն առ Հայաստանյայց Սբ Եկեղեցի: Նրա համար ոչ պակաս կարեւոր են մեր լեզուն ու մշակույթը, մեր ազգային ու հոգեւոր արժեքները. նա դրանց ճշմարիտ ջատագովն է նաեւ:




Վաստակաշատ հոգեւորականի ու շնորհազարդ գրագետի բազմաթիվ գրքերի («Կեանքը գերեզմանէն անդին», «Կիրակնօրեայ խոհեր», «Խաչին ճանապարհը», «Մտասեւեռումներ», «Կեանք եւ յավերժութիւն», «Դէպի նոր հորիզոններ», «Շողարձակ խոհեր եւ տիպարներ», «Ճառագայթող հոգիներ», «Անկախ Հայաստան», «Աստուած իմ կեանքս է», «Արձակ եւ չափածոյ մանրավէպեր», «Խօսք ընդ Աստուծոյ», «Անկատար ամուսնութիւնը», «Համաճարակը», «Գող ծառաներ» (վերջին երեքը՝ կատակերգություններ) կողքին, 2005 թ.՝ նրա 95-ամյա հոբելյանի նախօրյակին, Գլենդելում հրատարակվեց «Կիրակնօրեայ շողարձակ խոհեր» խորագրով ընտրանին: Այս ստվարածավալ ժողովածուն (600 էջ) նվիրված է դստեր՝ կյանքից վաղաժամ հեռացած Մարի Տարագճյանի հավերժալույս հիշատակին:

Ծննդյան 95-ամյակի եւ այս սքանչելի ժողովածուի լույս ընծայման առթիվ շնորհավորելով մեր Եկեղեցու նվիրյալ ու շնորհազարդ քահանա տեր Վարդանին՝ կամենում ենք ի սրտե կրկնել Տ. Հովնան արք. Տերտերյանի՝ նրան հասցեագրված բարեմաղթանքը. «... աղոթք կը բարձրացնենք առ Աստուած, որ Ձեր կանթեղ սրտէն նոր պատգամներով փառաւորէք Աստուծոյ անունը եւ զԱստուած դարձնէք լոյսի ճանապարհը՝ մեր նորահաս մանուկներուն», եւ խոսքն ավարտել հենց իր՝ Տ. Վարդան ավ. քհն. Տյուլկերյանի բանաստեղծական տողերով.

Իրական ծերը զառամածը չէ,
Որ կնճիռ ունի ու կը դողդողէ,
Այլ՝ հոգին է սեւ, որ ունի բծեր
Նոյնիսկ դեռատին կը դարձնէ ծեր.

*ՔՆԱՐԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ*

*Վարդան ավ. քհնյ. ՏԻՒԼԿԵՐԵԱՆ*

## ԹԱԳԱՒՈՐԸ ԵՒ ՄՐՋԻՒՆԸ

Ասիացի Միհրդատ թագաւորը մեծազօր,
Ռազմադաշտէն տուն դարձաւ՝ հայրենիքը ազատր.
Պարտուեցաւ չարաչար Հռովմէական բանակէն,
Ազատեցաւ մազապուրծ զինք հալածող ոսոխէն:
Եւ ամօթէն կարեվէր՝ յուսալքուած ու դժգոհ,
Նստաւ ծառի մը ներքեւ՝ վիշտերու մէջ մտախոհ.
Ալ կարծես թէ շիջացած էր կեանքին վերեւ ամէն լոյս,
Մանուկի պէս հեկեկաց՝ անմխիթար ու անյոյս:

Յանկարծ տեսաւ մրջիւն մը, որ յարատեւ կը փորձէր,
Ծառին վրայ մագլցիլ՝ անկումներուն անտարբեր.
Մարմնէն խոշոր հատիկ մը իր շալակին զետեղած՝
Կը բարձրանար ծառն ի վեր, յանկարծակի կ՚իյնար ցած:

Ու վերջապէս մրջիւնը հաստատակամ պայքարով,
Յաջողեցաւ կոճղին մէջ տեղաւորուիլ իր բեռով,
Եւ այն ատեն Միհրդատ զգաստօրէն մտածեց,
Իր նահանջէն ամօթխած՝ ինքը զինքը կշտամբեց.
«Երբ աննշան մրջիւնը մը ամէն անկում կ՚անտեսէ,
Իր դժուարին վերելքին յաղթութիւնը կ՚ողջունէ,
Ես, բանական ծնունդ մը թիկուն դարձնել ոսոխին,
Ներելի չէ, ո՛չ ինծի, ո՛չ մէկ զգաստ զինուորին»:

Եւ Միհրդատ յուսավառ՝ թմրութիւնը թօթափեց,
Վերակազմեց բանակը՝ դէպի ճակատ արշաւեց.
Գինարբուքէ զգլխած՝ զինով զօրքը Հռովմի,
Միհրդատի գրոհէն խուճապահար կը փախչի:

# ՀԱՅ ՀԻՆ ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

*Սկիզբը՝ 2006-ի թիվ 15-21*

## Ուշ բրոնզի եւ վաղ երկաթի դարի՝ Ք. ա. 15-9 դդ. արվեստը

Ախթալայի, Քալակենտի եւ Աստղի բլուրի գոտիների վրայի պատկերները որոշ նմանություն ունեն Լճաշենի գոտիների պատկերագրության հետ: Ըստ Ս. Եսայանի՝ փոքր-ինչ ֆանտաստիկ պատկերագրությամբ այծերը եւ եղնիկները խորհրդանշում են որոտ ու կայծակ, հետեւաբար՝ ջուր, որպես մայր հողը բեղմնավորող երկնային արական սկիզբ եւ կապված են պտղաբերության գաղափարի հետ: Այծերի եւ եղնիկների երկնային բնույթը շեշտված է նաեւ սոլյար պատկերներով, խաչերով, «վազող» գալարներով: Այս գոտիները թեեւ պատահական գյուտեր են, սակայն պատկերագրությունից եւ վազող գալարների առկայությունից ելնելով՝ դրանք թվագրվում են Ք. ա. I հազարամյակի սկզբով (Ս. Եսայան, 1978, էջ 16):

Լճաշենի երրորդ գոտու վրա դրվագված է որսի տեսարան: Այս գոտին եզերում է նեղ եզրագոտին՝ լցված կարճ եւ շեղ գծիկներով, որոնց հաջորդում է երկշարք «վազող» գալարներից բաղկացած բորդյուրը: Բուն թեմատիկ պատկերը եզերված է նեղ շրջանակով: Գոտու ձախ եզրին շեղանկյուններ-րի հաջորդական շարքերից ձեւավորված սյուների ներսում մի ուղղանկյուն է՝ լցված միմյանց հետ հատվող շեղ գծիկներով: Սրա մերձակցությամբ պատկերված է «առյուծի» գլխով կամ դիմակով, լայնաթիկունք, նեղ մեջքով, շեշտված առնանդամով մի առասպելական հերոս՝ մեջքին լայն, եզրերը դրվագազարդ գոտի, ոտքերին՝ վեր ծալված քթերով երկարաճիտ կոշիկներ: Ջրահապատ կուրծքը զարդարում են պտուկների վրա դրված երկու շրջանաձեւ բրոնզե թիթեղները: Նա աջ ձեռքին բռնել է մահակ կամ մտրակ, իսկ ձախով վարում է կեռ առեղով, բարձր թափքով երկանիվ կառքը, որի անիվների ճաղերը հնգաթեւ աստղի տեսք ունեն, իսկ մարտակառքին լծված են առասպելական կենդանիներ՝ միաեղջյուրներ՝ ճանկավոր ոտքերով եւ եղջյուրազարդ գլուխներով: Երասաններն ամրացված են ոչ թե ձիերին, այլ՝ լծին: Երասաններ են պատկերված նաեւ Նոյեմբերյանից հայտնաբերված կավանոթի վրայի կառքի ռելիեֆ եւ Կախեթիայից հայտնաբերված մարտակառքի բրոնզե մոդելի վրա, որտեղ երասաններն ամրացված են սանձին: Կառապանի առջեւ եւ առջեւի պլանի միաեղջյուրների վզի տակ պատկերված են սկավառակաձեւ ճառագող արեւներ, ինչը շեշտում է իրադարձությունների երկնքում կատարվելը, հետեւաբար՝ հերոսի աստվածային բնույթը: Առյուծը, որի դիմակը կրում է հերոսը, դարձյալ արեւի խորհրդանիշ է: Առջեւի պլանի միաեղջյուրի ոտքերի առաջ եւ ետեւում սնկաձեւ առարկաներ են պատկերված, իսկ յուրաքանչյուր միաեղջյուրի առջեւից քայլում է մի թռչուն: Հաջորդ կոմպոզիցիան խիստ թերի է, սակայն այստեղ գրեթե նույնատիպ աստվածության առջեւում պատկերված են երեք միաեղջյուր, որոնց, ինչպես եւ կառքին լծվածներին Ս. Եսայանն անվանում է ձիեր: Այս երեք միաեղջյուրների գլուխների մոտ արեւի ճառագող սկավառակներ են, իսկ նրանց հանդիման պատկերված են թռչուններ, որոնք կտցում են միաեղջյուրների գլուխները եւ խանգարում նրանց ընթացքը: Միաեղջյուրներից մեկի վզի մեջ մխրճված նետասլաքը հիմք է տալիս ենթադրելու, որ այստեղ պատկերված է երկնային որսի առասպելից մի դրվագ: Այս հիանալի գոտին Ս. Եսայանը թվագրում է Ք. ա. IX-VIII դդ.: Ախթալայի, Մուսիերի եւ Աստղի բլրի գոտիների վրա նույնպես երկնքի տիրակալները պատկերված են առյուծի դիմակներով:



Ստեփանավանից հայտնաբերված գոտու եզրերը զարդարված են երկշարք եղեւնազարդով, որի մեջ պատկերված են կետերով լցված եռանկյունիներ: Գոտու լայնական կողերից դեպի կենտրոն են խորանում միմյանց մեջ ներգծված հավասարասրուն եռանկյունիներ, որոնց միջակայքը լցված է «վազող» գալարներով եւ գալարվող օձերով: Համանման կառուցվածք ունեն Թակիայի (այժմ՝ Բազմաղբյուր), Կարմիր բերդի, Բջնիի եւ Հյուսիսային Օսեթիայի Տրելիի դամբարաններից հայտնաբերված գոտիների եզրապատկերները: Ստեփանավանի գոտու վրա պատկերված է երկու հակառակորդ բանակների միջեւ ծավալված ճակատամարտը: Աջ կողմում գնդերից մեկի առաջնորդն է, որից պահպանվել է լոկ կատարավոր սաղավարտով զարդարված գլուխը: Սրա ետեւում մյուս առաջնորդն է՝ ձեռքին կիսագլանաձեւ վահան, գլխին կատարավոր սաղավարտ, իսկ ձախ կողքից կախված է երկար սուր: Նրա ետեւից երկու շարքով շարժվում են զինվորները՝ մի ձեռքին գլխից վեր բարձրացրած, հարվածի պատրաստ նիզակներ, մյուսին՝ կիսագլանաձեւ վահաններ: Նիզակավոր զինվորների կողքով ընթանում է հեծյալը՝ իր կողքից տանելով նաեւ կազմ-պատրաստ պահեստային ձին (սա թերեւս վկայում է, որ անպաշտպան ձին մարտի ժամանակ առավել խոցելի էր, եւ վիրավոր կամ սպանված ձիուն հարկ էր լինում փոխել մարտի ժամանակ): Հեծյալը նույնպես զինված է նիզակով եւ վահանով, սակայն նրա վահանը, ի տարբերություն հետեւակի ծանր եւ մեծ վահանների (որոնք անհրաժեշտության դեպքում մի ծայրով կարող էին դրվել գետնին, միմյանց հպվել եւ կենդանի պատնեշ կազմել ընդդեմ հարձակվող թշնամու), կլոր է եւ թեթեւ, որպեսզի չխոչընդոտեր մարտիկին սրընթաց վարգի պահին: Հեծյալի հետեւից շարժվում է ապրանքատար սայլը, որն ըստ Ս. Եսայանի՝ խորհրդանշում է զորագնդի գումակը: Սայլի վրա կանգնած սայլապանը նիզակով պաշտպանվում է իր վրա հարձակվող թշնամու զինվորից (պահպանվել են լոկ ոտքերը եւ երկար սրի պատյանը): Զորքի թիկունքը թափանցած եւ գումակի վրա հարձակված ռազմիկին հետապնդում է մեկ այլ ռազմիկ, որը մի ձեռքով քաշում է եղնիկի վզին անցկացված պարանը, մյուսով՝ նիզակահարում թշնամուն՝ խոցելով նրա սիրտը: Եղնիկի առկայությունը մարտի դաշտում պատահական չէ: Ավելի քան մեկհազարամյա վաղեմություն ունեցող Քարաշամբի արծաթե գավաթի վրա՝ մարտին նախորդող խնջույքին մասնակցում է նաեւ զոհաբերության եղջերուն: Խեթական ծիսակարգում, կարեւորագույն իրադարձություններին նվիրված զոհաբերությունների ժամանակ, եղջերվին կենտրոնական դեր էր վերապահված: Բացառված չէ, որ հնուց անտի Հայաստանում վկայված այս ծեսը պահպանվել է նաեւ ուշ բրոնզի եւ երկաթի դարում, եւ եղջերուն մարտի դաշտ է տարվել որպես մարտնչող կողմերից մեկի հովանավոր տոտեմ, եւ թերեւս այս կենդանուն հափշտակելու ու խուճապ առաջացնելու համար էր ձեռնարկվել հակառակորդի թիկունքը թափանցելու ռազմարշավը, որի հետեւանքով կողմերի միջեւ ծավալվել էր կենաց ու մահու պայքար:

Ուշագրավ է, որ հինարեւելյան մի շարք քաղաքակրթությունների պատկերագրություններում (Եգիպտոս, Ասորեստան, Բաբելոն, Աքեմենյան Պարսկաստան եւ այլն) առաջնորդներն իրենց չափերով զգալիորեն գերազանցում են հասարակ մարտիկներին:

*Շարունակությունը՝ էջ 8*

## Սեղանակցում

**- Հիսուս Քրիստոսի վարդապետության ամենաառանցքային եզրերից մեկի՝ «Լեռան քարոզի» նախադուռը հանդիսացող երանիների շարքում թվով 3-րդ երանին ուղղված է հեզերին: Ինչո՞ւ է Տերը երանի տալիս հեզերին: Ովքե՞ր են հեզերը:**

# Երանի՜ հեզերին, որովհետեւ նրանք երկիրը պիտի ժառանգեն...

**Մեր հյուրն է Նոր Նորքի Սբ Սարգիս եկեղեցու հոգեւոր սպասավոր Տ. Կարապետ քահանա ԿԱՐԱՊԵՏՅԱՆԸ**

- Տեր Աստված յուրաքանչյուր մարդու հոգում դրել է երջանկության, երանության ձգտումը: Տերը եկավ, որպեսզի մարդն ունենա երջանիկ եւ երանական կյանք: Այս երանին ուսուցանում է, որ հեզությամբ է պայմանավորված այդ երջանկությունը: Հեզությունն ու խոնարհությունը, կարծեք, եղբայրներ լինեն: Հեզ եւ խոնարհ մարդն իր շրջապատի համար ճառագող լույս է, որով բոլորը պիտի լուսավորվեն: Հեզ մարդը կարող է ներել, սիրել դիմացինին: Հեզերն ականջալուր են լինում Տիրոջ խոսքերին եւ լավագույն օրինակն են Քրիստոսի ճշմարիտ աշակերտների: Քանի որ մարդն անկատար էակ է, ուստի պետք է ձգտի խոնարհության, հեզության, որով միայն կհասնի երջանկության: Ցավոք, այսօր մեր հասարակության մեջ կա այն մտայնությունը, թե հեզությունը տկարություն, թուլություն է: Մինչդեռ դա այդպես չէ: Հեզերը քաջ մարդիկ են, ովքեր կարողանում են ձգել բոլորին դեպի իրենց: Նշենք, որ պաշտոնյաները, ովքեր ավելի բարձր են կանգնած մյուսներից, առավել եւս պետք է լինեն խոնարհ, ինչպես ուսուցանում է Սուրբ Գիրքը: Հիշենք Աբրահամին, ով երանելի էր իր հավատով, հեզությամբ: Հիշենք սրբերին, որոնք թեպետ չունեին հարստություն, ստացվածքներ եւ հալածվում էին ամենուր, սակայն իրենց հեզությամբ եւ խոնարհությամբ հաղթում էին թշնամիներին: Մատթեոսի Ավետարանում Հիսուսը կոչ է անում նմանվել իրեն. «Սովորեցե՛ք ինձնից, որ հեզ եմ եւ սրտով խոնարհ...» (Մատթ. ԺԱ 29): Ցավոք, մեր իրականության մեջ խոնարհությունն այսօր բացակայում է:

**- Տե՛ր հայր, հեզ եւ խոնարհ մարդիկ այսօր մեր հասարակության մեջ հետին պլան են մղված: Ինչո՞ւ: Ո՞րն է դրա հիմնական պատճառը:**

- «Կանչվածները բազում են, իսկ ընտրյալները՝ սակավ» (Մատթ. ԻԲ 14),- ասում է Տերը: Բոլոր ժամանակներում էլ ընտրյալները քիչ են եղել, սակայն մեզ առաջնորդել են ճիշտ ճանապարհով՝ օրինակ հանդիսանալով բոլորին: Խոնարհ մարդը պատրաստ է իր կյանքը զոհաբերել հավատի, հայրենիքի, ընկերների համար:

**- Ինչպե՞ս հեզ լինել, դժվար չէ՞ մեր օրերում հեզ լինելը:**

- Հեշտ չէ հեզ լինելը, քանի որ պետք է ես-դ մի կողմ դնես եւ ապրես Աստծո կամքի համաձայն: Շատ դժվար է այս, սակայն հնարավոր է: Հեզության, խոնարհության հակադիր մոլությունը հպարտությունն է, որն առաջինն է մահացու մեղքերի մեջ: Գիտենք, որ երբեմնի բարի հրեշտակը՝ Արուսյակը, հպարտացավ՝ ցանկանալով իր աթոռն Աստծու աթոռին հավասար դնել. «Երկինք կբարձրանամ, իմ գահը կդնեմ երկնային աստղերից ավելի վեր... կբարձրանամ ամպերից էլ վեր, կնմանվեմ Բարձրյալին» (Եսայի ԺԴ 13-14), ուստի պատժվեց եւ վտարվեց երկիր: Հպարտությունն իր մեջ պարունակում է բոլոր մոլությունները՝ նախանձ, բարկություն, ծուլություն եւ այլն: Հպարտ մարդու թվացյալ հաղթանակը կարճատեւ է, բայց խոնարհությունը բարձր է բոլոր առաքինություններից: Կան բազում օրինակներ Սուրբ Գրքից, սրբերի վարքերից: Հիշենք փարիսեցու եւ մաքսավորի աղոթքը (տե՛ս Ղուկ. ԺԸ 9-14): Փարիսեցին հպարտ էր, փառաբանում էր իր անձն աղոթքի պահին, ուստի նրա աղոթքը լսելի չեղավ Աստծուն: Իսկ մաքսավորը խոնարհաբար աղոթում էր՝ ասելով. «Մեղա երկնքի եւ Քո առաջ», ուստի նա սրբված եւ արդարացած դուրս եկավ: Եվ Տերն ասում է. «Ով որ բարձրացնում է իր անձը, կխոնարհվի, եւ ով որ խոնարհեցնում է իր անձը, կբարձրացվի» (Ղուկ. ԺԸ 14): Ասվում է, որ ավելի մեծ չէ նա, ով հզոր քաղաքներ է գրավում, այլ նա, ով խոնարհությամբ կարողանում է զսպել իր կրքերը: Հեզության հնարավոր է հասնել ինքնաճանաչողության ճանապարհով: Հայրերից մեկն ասում է, որ հեզություն ձեռք բերելու համար պետք է գնալ գերեզմանատուն, նայել հազարավոր մեռելների շիրիմներին եւ հիշել, որ հող ենք եւ հող պիտի դառնանք: Այս գիտակցությունը խոնարհեցնում է մարդուն:



**- Տե՛ր հայր, իսկ Ոտնլվան կարո՞ղ ենք համարել հեզության լավագույն օրինակը:**

- Մի առիթով Հիսուս Քրիստոսը, Իր մոտ կանչելով աշակերտներին, այս խոսքն է ասում. «Ձեզնից ով կկամենա մեծ լինել, ձեր ծառան պիտի լինի» (Մատթ. Ի 26): Եվ Ինքը ծառայաբար խոնարհվեց, լվաց Իր աշակերտների ոտքերը (տե՛ս Հովհ. ԺԳ 4-18): Դա խոնարհության գերագույն օրինակ է, ոչ թե տկարության, այլ զորության արտահայտություն: Մեծագույն խոնարհը Հիսուս Քրիստոսն է, եւ մենք պետք է նմանվենք Նրան: Թող Աստված յուրաքանչյուրիս սրտում, մտքում առաջացնի ճշմարիտ հեզություն, խոնարհության զգացում, որպեսզի աստվածահաճո կյանքով ապրենք եւ հասնենք երանական փրկությանը Հիսուս Քրիստոսով:

*Հյուրընկալեց Անժելա ԽԱՉԱՏՐՅԱՆԸ*

---

**ԻՈՀԱՆ ԱՐՔ. ՍԱՆ-ՖՐԱՆՑԻՍԿԻ (ՇԱԽՈՎՍԿՈՅ)**

# ՓՈՔՐ ՄԵՂՔԻ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ

*Սկիզբը՝ թիվ 20-21*

Ամենափոքր մեղքի մերժման անհրաժեշտության մասին խոսքը մեզ բերում է մարդկային կյանքի կարեւորագույն հարցին՝ մահվանից հետո կյանքի հարցին:

Եկեղեցական Հայտնությունը հաստատում է, որ այս կամ այն կրքից չձերբազատված հոգին այդ կիրքը տանելու է իր հետ մյուս աշխարհ, որտեղ մարմնի բացակայության պայմաններում (նախքան հարությունը) անհնարին կլինի այդ կրքի բավարարումը, ինչից հոգին շարունակ կլինի ինքնայրման, մեղքի ու ցանկության անսպառ ծարավի տանջանքի մեջ՝ առանց դրանք բավարարելու հնարավորության: Խորտկասերը, ով իր երկրային կյանքում հենց միայն ուտելու մասին է մտածում, անկասկած իր մահվանից հետո տանջվելու է մարմնավոր կերակրի բացակայությունից, որովհետեւ չի զրկվելու դրան ձգտելու հոգու փափագից: Հարբեցողն աննկարագրելիորեն տառապելու է՝ չունենալով մարմին, որը կարելի էր բավարարել ոգելից խմիչքով, եւ այդպիսով չի կարողանալու ինչ-որ ժամանակով հանգստացնել տանջվող հոգին: Պոռնիկը նույն զգացումներն է ունենալու: Փողասերը՝ նույնպես: Ծխողը՝ նույնպես...

Հեշտ է փորձ կատարել: Թող ծխողը երկու-երեք օր չծխի: Ի՞նչ կզգա. հայտնի տանջանքը, որը դեռ մեղմացվում է կյանքի բոլոր հարաբերություններով ու զվարճություններով: Բայց հեռացրեք կյանքն իր բոլոր զվարճություններով... Տանջանքը կսրանա: Տառապում է ոչ թե մարմինը, այլ հոգին, որն ապրում է մարմնի մեջ եւ սովորել է մարմնի միջոցով բավարարել իր ցանկությունը, իր կիրքը: Բավարարումից զրկված հոգին տառապում է: Այդպես տառապում է նաեւ հարուստ մեղավորի հոգին, երբ հանկարծ զրկվում է հարստությունից, հանգստավետություն սիրողը, երբ զրկվում է հանգստից, ինքնասերի հոգին, երբ հարված է ստանում իր ինքնասիրությանը... Որքա՜ն ինքնասպանություններ են գործվել այս հողի վրա: Այս ամենը փորձառություն է, մեր երկրային կյանքի մերկ փորձառությունը:

Արդեն այս երկրի վրա մենք կարող ենք փորձեր անել մեր հոգու վրա: Հարկ է, որ ամեն մարդ հեռատես լինի: Հարկ է սեփական տունը պահպանել պատի մեջ անցքի բացումից (Մատթ. ԻԴ 43):

Սա զգալով՝ մի՞թե կարելի է հանգիստ տրվել կրքերին կամ նույնիսկ դրանք բաժանել «լուրջ» եւ «անմեղ» կրքերի: Չէ՞ որ կրակը կրակ է մնում, լինի վառարանի, թե վառվող լուցկու: Մեկն էլ, մյուսն էլ մարդուն ցավ են պատճառում, երբ նա դիպչում է դրանց, եւ կարող են մահացու լինել: Պետք է հասկանալ այն աներկբա ճշմարտությունը, որ ամեն կիրք, ամեն չարություն, ամեն մարմնական ցանկություն կրակ է:

Աստվածային Օրենքը մարդկային մարմնի բնազդները սահմանների մեջ է դրել, իսկ հոգու կամային եւ ցասմնական զորություններին տալիս է ճշմարիտ ուղղությունը, որպեսզի մարդը հարմար ու հեշտ ընթանա դեպի հոգեղենացումը: Ի՞նչ կոչել այն մարդուն, ով, այս ամենը հասկանալով, հանգիստ ու թեթեւամտորեն է վերաբերվում իր կրքերին, դրանք արդարացնում՝ քնեցնելով իր հոգում եղած փրկական նրբանկատության բոլոր նշանները:

Նախեւառաջ պետք է *դադարել սեփական մարմնական ցանկությունն արդարացնելուց*, նույնիսկ ամենափոքր, այն պետք է դատապարտել Աստծո եւ սեփական անձի առաջ: Պետք է աղոթել դրանից ազատվելու, փրկվելու համար: Փրկիչ Տերը վերացականորեն չէ՛ «փրկիչ» կոչվում, այլ իրապե՛ս: Փրկիչը փրկում է բոլոր թուլություններից ու կրքերից: Նա ազատություն է շնորհում: Նա բժշկում է: Լիովին տեսանելի ու շոշափելի կերպով: Բժշկելով ներում է: Ներումը բժշկությունն է Նրա, ինչը պետք է ներել: Այն տրվում է միայն այս արդարության քաղցն ու ծարավն ունեցողներին: Պարզապես ցանկացողներին՝ շատ մարմրուն ցանկություն ունեցողներին, բժշկություն չի տրվում: Այն տրվում է սրտով այրվողներին, բոցավառվողներին, աղաչողներին, ձգտողներին: Որովհետեւ միայն այսպիսիներն են ընդունակ գնահատելու Աստծո բժշկության պարգեւը, չտրորելու այն, շնորհակալ լինելու դրա համար եւ զգուշությամբ, Փրկչի անունով, այն պահպանելու չարի նոր փորձություններից:



Իհարկե, ծխելը խիստ փոքր մարմնական ցանկություն է, ինչպես որ լուցկին էլ փոքր կրակ է: Սակայն այս ցանկությունն էլ գարշելի է Սուրբ Հոգու համար, եւ անհնար է նույնիսկ պատկերացնել Տիրոջ մտերիմ աշակերտներից որեւէ մեկին գլանակ ծխելիս:

«Վերացրո՛ւ փոքր մարմնական ցանկությունները»,- ասում են սրբերը: Չկա այնպիսի կաղին, որն իր մեջ չպարունակի կաղնի ծառը: Նույնը վերաբերում է մեղքերին: Փոքր բույսը հեշտությամբ է հողից հանվում, իսկ մեծն արմատախիլ անելու համար պահանջվում են հատուկ գործիքներ:

*Ծխելու եւ հոգուն հակառակ բոլոր «արդարացվող» մանր օրինախախտումների պատճառը բարձիթողի վիճակն է*՝ ոչ միայն մարմնի, այլեւ հոգու: Դրանք անձի կեղծ հանգստացում են («նյարդերի», ինչպես երբեմն ասում են՝ առանց լիովին գիտակցելու, որ նյարդերը հոգու մարմնավոր հայելին են): Այսպիսի «հանգստացումը» ավելի ու ավելի է հեռացնում իրական հանգստից՝ Հոգու ճշմարիտ մխիթարությունից: Այսպիսի հանգստացումը պատրանք է: Այժմ, քանի դեռ գոյություն ունի մարմինը, այս հանգստացումը կարիքն ունի շարունակ նորոգման, իսկ հետո այս թմրամոլական հանգստացումը կդառնա հոգու տանջալի գերվածության աղբյուր:

Պետք է հասկանալ, որ իր չարությունը դուրս ժայթքեցնողը նույնպես «հանգստանում է». սակայն, իհարկե, միայն մինչեւ չարության հաջորդ բռնկումը: Կրքի բավարարմամբ սեփական անձը հանգստացնել չի կարելի: Կարելի է հանգստանալ կրքին հակառակելով, այն զսպելով միայն: Հանգստանալ կարելի է միայն ամեն, նույնիսկ ամենաաննշան, կրքի դեմ պայքարի՝ կիրքը սեփական սրտի մեջ չընդունելու խաչը կրելով: Սա է ճշմարիտ, հաստատուն ու իրական, եւ ամենակարեւորը, հավիտենական երջանկության ճանապարհը: Մշուշից վեր բարձրացողը տեսնում է արեւն ու մշտապես կապույտ երկինքը: Կրքերից վեր բարձրացողը մտնում է ոլորտը Քրիստոսի խաղաղության, աննկարագրելի երանության, որը սկսվում է արդեն այստեղ՝ երկրի վրա, եւ հասանելի է յուրաքանչյուր մարդու:

Ծխախոտից եղած երջանկությունը խաբեական է, այնպես, ինչպես մեկի վրա բարկանալը, մեկի հանդեպ հպարտանալը, մարդկանց համար այտերն ու շուրթերը ներկելը, քաղցրավենիքի փոքր կտոր գողանալը՝ աստվածային բնության եկեղեցական պնակից փոքրիկ լումա թռցնելը: Պետք չէ այսպիսի երջանկություններ փնտրել: Դրանց ուղիղ, տրամաբանական շարունակությունն են հաշիշը, մարդու դեմքին հարված հասցնելը կամ նրա վրա կրակելը, որեւէ արժեքի կեղծումը: Երանելի է այն մարդը, ով այսպիսի երջանկություն գտնելով՝ այն կվանի արդար ու սուրբ բարկությամբ: Աշխարհում թագավորող այս դիվային երջանկությունը մի պոռնիկ է, որ ներխուժել է ճշմարտության, մաքուր ու երանելի ուրախության Աստծո՝ Քրիստոսի հետ մարդկային հոգու ամուսնության մեջ:

*Շարունակելի*

***Թարգմանությունը՝ Ս. ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆԻ***

# ՀԱՅ ՀԻՆ ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ



Սկիզբը՝ էջ 6

Զորաշարասյան առջեւում պատկերված է եռաձի մարտակառք, որի թափքին կանգնած են երկու կառամարտիկներ: Մյուս մարտակառքից պահպանվել է լոկ թափքը: Սրա ետեւից շարժվում է մի հեծյալ՝ իր պահեստային ձիով: Ավելի վեր պատկերված է մեկ այլ հեծյալ՝ դարձյալ իր պահեստային ձիով: Նա կարծես պաշտպանում է մարտակառքը: Աջ ձեռքով նա բռնել է ձիու սանձը, իսկ ձախ ձեռքի նիզակով հարվածում է դեպի մարտակառքը սլացող սրակիր հեծյալին: Այս գոտու պատկերագրությունը, որը բացառիկ է ոչ միայն Հայաստանում, այլեւ Հարավային Կովկասում, ամբողջական պատկերացում է տալիս Հին Հայաստանի զինված գնդերի կառուցվածքի մասին, որոնք բաղկացած էին ծանրազեն հետեւակից՝ զինված երկար նիզակներով, թեթեւազեն հեծելազորից, մարտակառքերից, առաջապահ եւ վերջապահ գնդերից: Նման զորագնդերը կարող էին ոչ միայն հաջողությամբ պաշտպանել հայրենիքը թշնամուց, այլեւ ձեռնարկել հեռավոր ռազմերթեր: Հայկական լեռնաշխարհի բանակի կառուցվածքը եւ մարտավարության սկզբունքները, ճակատամարտի ժամանակ ծավալվող գործողությունների հաջորդական ընթացքն արտացոլված են Ստեփանավանի գոտու վրայի մարտի տեսարանում:

Աստղի բլրի գոտու եզրերը զարդարված են խաչվող գծիկներով եւ «վազող» գալարներով: Կոմպոզիցիան բաղկացած է երկու մասից: Ձախ կողմում պատկերված է նիզակով զինված մի հեծյալ կին, որի առջեւ կանգնած է մի տղամարդ՝ գլխին ատամնավոր սաղավարտ, ձեռքին՝ աղեղ: Նրա առջեւ պատկերված է քառաձի մարտակառք, որի թափքում կանգնած է մի կին՝ ձեռքին խաչազարդ վահան: Հեծյալ կնոջ առջեւ մեկ այլ աղեղնավոր զինվոր է: Կոմպոզիցիան եզրափակում է ծագին կերակրող եղնիկի ֆիգուրը: Կառամարտիկների ձեռքի վահանից դեպի աղեղնավորներն է թռչում բացած ճանկերով, կիսաբաց կտուցով մի թռչուն եւ թեւերը թափահարելով՝ փորձում խանգարել նետահարողներին: Աջ կողմում կրկնվում է նկարագրված սյուժեն՝ այն տարբերությամբ, որ հեծյալ կանայք դասավորված են երեք շարքով, որոնց հետ կան երկու մարտակառք՝ կին կառամարտիկներով, եւ երեք աղեղնավոր: Սրանցից մեկի արձակած նետը մխրճվել է եղջերվի մեջքը, մինչդեռ ձախ կողմի պատկերում արձակած նետերն ընկել են գետնին՝ չհասնելով ծագին կուրծք տվող եղնիկին: Ձիու գավակից վերեւ պատկերված է ազատ ճախրող մի թռչուն: Կոմպոզիցիան երկու մասի է բաժանում կիսալուսիններից կազմված խաչը, որը մեծ նմանություն ունի Մուսիերից հայտնաբերված բրոնզե գոտու վրա պատկերված խաչին: Ըստ Ս. Եսայանի՝ կոմպոզիցիան ունի ծիսական բնույթ եւ կապված է երկնքի, արեւի ու պտղաբերության պաշտամունքի հետ: Այս գոտին կարեւոր տեղեկություն է հաղորդում ուշ բրոնզի եւ վաղ երկաթի դարում Հայաստանում գործող կին-մարտիկների եւ կամ ռազմիկ աստվածուհիների պաշտամունքի մասին:

Բջնիի գոտին պատկանում է նեղ գոտիների դասին: Այն եզրանախշված է եղեւնաձեւ զարդաքանդակով եւ եռանկյունիներով, որոնք լցված են շեղ գծերով: Նման եզրազարդերը բնորոշ են նաեւ Թակիայի, Կարմիր բերդի, Ստեփանավանի եւ Տրելիի գոտիներին: Բջնիի գոտու վրա պատկերված են հանգիստ կանգնած չորս առյուծներ՝ կախված պոչերով, մեծ գլուխներով, լայն բացված երախներով, սարսափազդու ժանիքներով, որոնք ուրվագծվում են կարճ կետագծերով: Այս նույն սկզբունքը կիրառված է նաեւ Վանաձորի միջին բրոնզի դարի արքայական դամբարանից հայտնաբերված դրվագազարդ գավաթի վրայի առյուծների պատկերագրությունում: Առյուծները ստատիկ-հանդիսավոր դիրքով են: Գրեթե նույնատիպ կոմպոզիցիա է պատկերված Էակիայի բրոնզե գոտու վրա: Առյուծների բացված երախներում պատկերված լեզուն Ս. Եսայանն ընկալել է որպես նետի կոթ եւ ապա եզրակացրել, որ այստեղ պատկերված է առյուծների որսի տեսարան, որը լայն տարածում ուներ ասսուրական եւ ուրարտական արվեստում:

*Շարունակելի*

***Հակոբ ՍԻՄՈՆՅԱՆ***
***Պատմական գիտ. թեկնածու, արվեստաբանության դոցենտ***

# ՊԱՐՈՆՅԱՆԻ ԵՎ ՕՏՅԱՆԻ ԱԶԳԱԿԻՑ
# ԼԵՌ ԿԱՄՍԱՐԸ

Սկիզբը՝ էջ 5

Լեռ Կամսարի դիտումներից պարզվում է, որ պատճառը մեր ազգային հին ու նոր անբուժելի մշտատեւ հիվանդությունն է. արեւմտահայը հոգեբանորեն պատրաստ չի եղել ոչ միայն կռվի, այլեւ ... համագումարյան «գաղտնի ընդհանուր» եւ «հավասար քվեարկությամբ» ընտրություններ կատարելու: Դրա հետեւանքով է, որ ոչ մեկն իր տեղում չէ եւ իր գործով չի զբաղվում:

Ահա լեռկամսարյան մի «փոքրիկ» վիճակագրություն.

«Մեր ամբողջ ուժը կբաղկանար *երեք հազար զինվորներէ, 68 ուտիչ մարմիններէ եւ 600 բաղաձայն թնդանոթներէ, որք կոչված էին իրենց բարոյական ազդեցությունը ի գործ դնել անկիրթ թշնամու վրա:*

Դրությունը այսպես էր, երբ տաճիկը հրաման ըրավ իր զորաց առաջ շարժվելու: *Անոր ուժը կբաղկանար 300 զինվորներէ, որոնց կառաջնորդեին նույնքան շվաքներ առաջնին ինկած: Խորամանկ տաճիկը իր հարձակման ատենները դիտմամբ երեկո էր ընտրեր, երբ շվաքները երկար կըլլան եւ ահարկու:*

*Երբ տաճիկը Կարնո պատին մոտեցավ, 600 թնդանոթներ մեկեն ... լռեցին:* Տաճիկը զարմացավ, եւ զարմանքը թնդանոթներու լուռ հայացքին տակ անկարգ քրքիջի փոխվեցավ: Տաճիկը ուշքի եկավ եւ նորեն հարձակեցավ: Մարտը բորբոքեցավ. երկուստեք իրար վրա խոյացան անհնարին հարվածներով: Կռվին հաջողությունը մեր կողմն էր դարձեր, երբ *արեւի տաք ժամանակ հանկարծ մեր զորաց շվաքները դավաճանությամբ կռվողներու ետեւն անցան: Այս դեպքը լքումն առաջացուց մերիններին մեջ, եւ զորքը կռնակ դարձնելով փախավ:*

*Տաճիկը մեր թնդանոթներու տեղատարափ լռության տակ քաղաքը մտավ»* (Նույն տեղում, էջ 80-81, ընդգծ. մերն են - Ս. Մ.):

Այս է պատմական բուն ճշմարությունը մեր կորցրած հայրենիքի ու մեր ժողովրդի ծանրագույն ողբերգության մասին, որ գրառել է Լեռ Կամսարը՝ քաղաքական երգիծանքի ասպարեզում հասնելով պարոնյանական ու օտյանական սրության: Մեր «600 բաղաձայն թնդանոթները տեղատարափ լռել» են՝ ինչո՞ւ, թշնամու վրա չեն կրակել՝ ինչո՞ւ: Հրամայո՞ղ չի եղել, թե՞ կրակելու հրամանը կատարող չենք ունեցել: Երեք հազար զինվորն ինչո՞ւ է ընկրկել երեք հարյուրի առաջ: Վախեցել է նրանց «երկարող ահարկու ստվերների՞ց»:

*Շարունակելի*

***Սամվել ՄՈՒՐԱԴՅԱՆ***
***Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր***

# ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ



Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Վիրահայոց թեմի Մշակույթի հանձնախմբի եւ Թբիլիսիի Մշակութային հարաբերությունների կենտրոն «Կովկասյան տան» համատեղ նախաձեռնությամբ ու Վրաստանում ՀՀ դեսպանատան աջակցությամբ՝ նոյեմբերի 24-ից 26-ը ներառյալ Թբիլիսիում բացվեց թիֆլիսահայ լուսանկարիչների ցուցահանդես: Ներկայացվեցին Եսայի Աբովյանի, Յուրի Ակուլյանի, Յուրի Մեչիտովի, Ազատ Մանուկյանի, Թեմուրի Գեւորգյանի, Ալեքսանդր Մամուլովի, Արտյոմ Կիրակոզովի, Ռուբեն Ռուխկյանի եւ Յուրի Տերտերյանի բազմաբովանդակ աշխատանքները:

Միջոցառմանն օրհնության եւ գնահատանքի խոսքով հանդես եկան առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը, ՀՀ դեսպան Հրաչ Սիլվանյանը, Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Վան Բայբուրթյանը, Մշակույթի հանձնախմբի համակարգող Միքայել Ավագյանը, ճանաչված լուսանկարիչ Յուրի Մեչիտովը, Թբիլիսիում լույս տեսնող «Կավկազսկի ակցենտ» պարբերականի գլխ. խմբագիր Համլետ Չուկակիշվիլին, «Կովկասյան տան» հայկական մասի վարիչ Վիկտորիա Մաքսուեան:

Բանախոսները կարեւորեցին հատկապես այն, որ Վրաստանի անկախացումից հետո այս նախաձեռնությունն անդրանիկն էր իր բնույթով: Ներկաների համոզմամբ՝ Վիրահայոց թեմի կողմից այս ու հետագայում կազմակերպվող նման միջոցառումները դրական մեծ տեղաշարժեր կբերեն՝ նպաստելով ավանդականի կատարելագործմանն ու նորերի ի հայտ գալուն, որովհետեւ վիրահայ լուսանկարչական արվեստը հնակունք պատմություն ունի եւ պատշաճ տեղ է գրավում հայ մշակութային կյանքում:

Խրախուսվեց նաեւ միջոցառման ձեւը՝ լուսանկարիչներին միասին ներկայացնելու միտումը, որը, անշուշտ, կազմակերպիչների կողմից վիրահայությանը համախմբված տեսնելու եւս մեկ բարի ու արդյունավետ քայլ էր:

Ցուցահանդեսին ներկա էին նաեւ Վրաստանում Հռոմի Կաթոլիկ եկեղեցու առաջնորդ Տ. Ջուզեպպե եպիսկոպոս Պազոտոո, ներկայացուցիչ՝ Վրաստանում Բապտիստական եկեղեցուց, վիրահայ հանրահայտ նկարչուհի Գայանե Խաչատուրյանը, հայ ու վրացի անվանի այլ արվեստագետներ, համայնքային ներկայացուցիչներ:

***ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ***
***ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ***

# ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՅ ՊԵՏԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՀՈՐՈՎՈՒՅԹՈՒՄ

Լույս է տեսել վաստակաշատ պատմաբան Վրեժ Վարդանյանի «Հայ եկեղեցին վաղ միջնադարի քաղաքական խաչուղիներում» ուշագրավ մենագրությունը: Այն բաղկացած է երկու բաժնից: Առաջին բաժնում («Հայ Առաքելական եկեղեցին՝ Արեւելքում քրիստոնեության միջնաբերդ») անաչառորեն քննության են առնվում Հայաստանում քրիստոնեության՝ որպես պետական կրոն հռչակման, Գրիգոր Լուսավորչի ձեռնադրության, հեթանոսության դեմ պայքարի, IV-V դդ. Հայ եկեղեցու եւ պետության բազմաբարդ հարաբերություններին վերաբերող հիմնահարցերը: Խորությամբ լուսաբանվում են Հայ եկեղեցու հոգեւոր, ազգային-քաղաքական ձեռնարկումները, երկրում նոր կրոնի արմատավորման առանձնահատկությունները:

Ի տարբերություն նախկինում ընդունված կարծիքի՝ մենագրության հեղինակն այն տեսակետն է հայտնում, որ հայոց զանգվածային դարձի պայմաններում հնարավոր չէր երկրի բոլոր բնակավայրերում եկեղեցական նոր շենքերի կառուցումը, ուստի անտրամաբանական ու անհավանական է, թե Տրդատ թագավորն ու Գրիգոր Լուսավորիչը հիմնահատակ ավերեին հեթանոսական կռատները: Բացի դա, նրանք նման քայլի չէին կարող դիմել, որովհետեւ դրանով կհարուցեին հեթանոսաբարո բնակչության դժգոհությունը, իսկ եկեղեցական նոր շենքերի կառուցումն էլ կպահանջեր մեծ միջոցներ: Ուստի նպատակահարմար էր մեհենական շինությունները վերածել եկեղեցիների:

Եվս մեկ փաստարկ է մեջբերում հեղինակը՝ ի պաշտպանություն սույն տեսակետի. մեհյանները եկեղեցիների վերածելու շնորհիվ նոր կրոնը կարող էր հոգեհարազատ դառնալ ժողովրդին, որն այդ ամենը կդիտեր իբրեւ իր հնօրյա հավատալիքների շարունակությունն ու զարգացումը: Նման ձեռնարկում էր նաեւ հնավանդ որոշ հավատալիքների պատվաստումը քրիստոնեական կրոնին, ավելին՝ Գրիգոր Լուսավորիչը քրիստոնեացրեց նաեւ հեթանոսական շրջանի մի քանի սիրված ժողովրդական տոներ՝ Վարդավառը, Տյառնընդառաջը (Տրնդեզ), Ջրօրհնեքը, ինչպես եւ որոշ սրբատեղիներ:

Այսպիսով, ըստ հետազոտող գիտնականի, դիցապաշտ Հայաստանի ստեղծած քաղաքակրթության հոգեւոր արժեքների մի զգալի մասը պահպանվեց՝ ներհյուսվելով քրիստոնեական հավատքին՝ վերջինիս հաղորդելով ազգային երանգներ: Դրա շնորհիվ հայոց կենցաղում, պաշտամունքի եւ մշակույթի մեջ հարատեւեց դիցական ժամանակների ոգին: Հենց նման աշխարհազգացողության հետնախորքի վրա IV-V դդ. հայկական ճարտարապետությունը որդեգրեց հեթանոսական կառուցողական արվեստի ավանդները:

Աշխատության երկրորդ բաժնում («Հոգեւոր դիմակայության եւ դավանական ինքնորոշման խաչուղիներում») ներկայցված են Հայ Եկեղեցու որդեգրած դիրքորոշումն ու ունեցած դերակատարությունը Վարդանանց եւ Վահանանց պատերազմների ընթացքում, ինչպես նաեւ դավանաբանական բանակռիվների հանգույցներում (VI-VII դդ.): Հեղինակը պատմական տրամաբանությամբ ապացուցում է այն տեսակետը, թե ինչպես Մեծ Հայքում պետական հիմքերի վրա արմատավորված քրիստոնեական հավատը հետզհետե վերածվեց նաեւ քաղաքական ազդու գործոնի, որին ամուր լծորդվեցին երկրի անկախ պետականության, ժողովրդի ազգային դիմագծի, հոգեւոր-գաղափարական ինքնուրույնության պահպանման հույսերը:

Փաստական կռվաններով վերստին եւ նորովի արմատավորվում է պատմական այն ճշմարտությունը, որ, կապված ժողովրդի գոյատեւման ու գոյապահպանման հրատապ, կենսահարույց խնդիրների հետ, Հայոց Եկեղեցին վաղ միջնադարից սկսած ձեռք բերեց նաեւ պետաիրավական, դիվանագիտական լիազորություններ եւ էականորեն սատարեց երկրի ներքաղաքական կայունությանը, ազգային-բարոյական ճշմարիտ սկզբունքների շուրջ ժողովրդի համախմբմանը:

Աշխատության համապատասխան գլուխներում խորությամբ եւ մանրամասնությամբ լուսաբանվում է Հայոց Եկեղեցու լուսավորչական, բարեգործական եւ օրինակարգող գործունեությունը:

Սույն ուսումնասիրությունը նախատեսված է ընթերցող լայն շրջանների համար:

***Արմեն ԿԱՐԱՊԵՏՅԱՆ***
***Պատմ. գիտ. թեկնածու***

**ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ**
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
**Հիմնադիր՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
**Հրատարակիչ՝**
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
**Գլխավոր խմբագիր՝**
Աստղիկ Ստամբոլցյան
**Գրանցման վկայական՝ 624**
**Խմբագրության հասցեն՝**
ք. Վաղարշապատ, ՔԿ
**հեռախոս՝ (0+231) 54510, 56780**
Ստոր. տպագր. 1. 12. 2006 թ.
**Տպաքանակը՝ 2500 Գինը՝ 50 դրամ**